

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### 20-ՆԵՐՈՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵՆԵՆ ԻՆՇՍՈՒՆԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԵՏՔ

20-ներու նահատակութենէն ինիսունը երկու երկար տարիներ եկան ու անցան՝ բայց անոնք, 20-ները, իրենց ընկերային, հայրենասիրական եւ համամարդկային գաղափարախօսութեամբ, իրենց գործնական, իրապաշտ եւ նշմարիտ պատգամներով՝ արեւով արբշիտ իրենց կեանքը ազգին մատաղ դարձնելու անօրինակ նուիրումով, եւ գերազանցապէս անբասիր դեկավարի յատկութիւններով կը մնան աւելի քան երբեք այժմեական, մեծապէս հրապուրիչ ու գերազանցապէս օրինակելի:



Կառուցուած են 20-ներու առջեւ իրենց պարթեւ հասակներով կայնած՝ աներկիւղ, իրոյտ եւ վաղուան լուսաւոր ապագայի հաւատք իրենց ներսիդին իրենց վարձատրութիւնը համարելով, անոնք մահը անարգեցին, եւ այդ հաւատով գորացած՝ քաջալերանք հանդիսացան գալիք սերունդներուն:

20-ներու նահատակութիւնը եւ անոնց գաղափարական առաքելութեան իմաստը կարեւոր ըմբռնելու համար, պէտք է յետադարձ ակնարկ մը նետել մեր բունականէն ինիսունը երկու տարիներ առաջ տիրող մեր ժողովուրդի ապրած ընկերային, ազգային, քաղաքական ու կեանքի ապահովական պայմաններուն վրայ:

Օսմանեան արիւննուշտ կայսրութիւններու տիրապետութիւններու ներքեւ, հայը վերածուած էր անտէր, անպաշտպան, իրաւագրկուած եւ կրաւորական գանգուած, այլապէս ոչ ոք իսկ պապեանական հայրենի հողին վրայ աւելի քան 500 տարի: Երկրէն ներս տիրող բոնութիւնները չորսդին կը ծաւալէին սարսափի մթնոլորտ: Կեանքի ու ինչքի անապահովութիւնը ողբերգական վիճակ ստեղծած էր ապրուստի տեսակէտէն, ամէնուրեք: Ու տակաւին, այդ բոլորին վրայ կատարուած արեւանգումներ, սպանութիւններ, կոտորածներ եւ վերջին հանգրուանով Ցեղասպանութեան ծրագրում, դեռեւս 1911-ի Սեւանի կի իրօքի հատական ժողովի նախագծած նախապահով:

20-ները չի հանդուրժեցին այս կացութեան: Անոնք, Քեօսթեմէի ժողովով երդում տուին իրենց կեանքի գոհաբերութեան օրինակով վերջ դնել այդ դժբախտ կացութեան: Ծրագրեցին զգեստնել իրօքի հատական պարագլուխները, առաջին առնելու համար հայոց դէմ իրօքուող Ցեղասպանութեան: Տէր կանգնիլ բազմաչարչար հայ ժողովուրդին: Անգամ՝ պաշտպան ըլլալ բոլոր իրաւագրկուած օսմանցի փոքրամասնութիւններուն, առանց խտրութեան: Նուիրակ անացնել հայ ժողովուրդին դարաւոր ազգային երազները, ստեղծելով ազատ ու անկախ արժանապատիւ հայրենիք: Էտրեան մեր հաւատացին Արեւելի հորիզոնին վրայ ծագող վաղուան ընկերավարական Հայաստանին: Փարամազի խօսքերով, անոնք, 20-ները, պատգամեցին հայ վրիժառու բազուկին, «կաթիլ կաթիլ մեռնելու փոխարէն, հայը անգամ մըն ալ պիտի մեռնի, որ հայը ազատ ապրի»:

20-ներու երազը յետ մահու դարձաւ իրականութիւն: Օսմանեան դաւադրական բոլոր նախնիները մնացին անհետեւ անք: Աւելին՝ Օսմանեան Կայսրութիւնը գամուեցաւ անարգանքի սիւնին: Այդ անարգանքը պիտի մնայ միշտ, մինչեւ առանձնապէս հայութեան ու ընդհանրապէս մարդկութեան դէմ գործած ռեժիմի ընդունումն ու դատապարտումը իր իսկ կողմէ:

Հայը անգամ մըն ալ ողջակիզուեցաւ, որ ազատ ապրի: Իրենց նահատակութենէն ետ, քան հազարներ եկան 20-ներու կիսատ բողոք սուրբ պայքարը շարունակելու համար: Սարդարապատը վկայ: Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը ապացոյց: Խորհրդային Հայաստանի հաստատումը՝ պատմական փաստ: Հայրենիքի անվտանգութեան, գիտական, կրթական, մշակութային, մարզական, քաղաքական ու այլ, բիրաւոր բնագաւառներու կառոյցներու հզօրացումը՝ իրողութիւն: Այդ բոլորէն ետ՝ հայ ժողովուրդի դարաւոր ձգտումներու պակասումը հանդիսացող՝ մերօրեայ Ազատ, Անկախ Հանրապետութիւնը:

20-ներու հաւատքն ու նահատակութիւնը, ջախջախիչ պարտութիւնը դարձան բուրմունքով Օսմանեան Կայսրութիւններուն: Ներկայիս, Թուրքիան, միջազգային ատեաններու մնայուն աղերսարկուն՝ կը խնդրէ անոնցմէ, որ մերժեն իր հասցէին կատարուող Հայոց Ցեղասպանական ամբաստանումը:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵՑ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ՈՒԺԵՐՈՒ ԴԻՍՈՒՍԸ

Հայաստանի Սահմանադրական Դատարանը Յունիս 10-ին հրապարակած իր որոշումով, մերժեց խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքները վիճարկող ընդդիմադիր ուժերուն՝ «Իմպիչմենտ» դաշինքի, «Նոր ժամանակներ», «Հանրապետութիւն» եւ «Օրինաց երկիր» կուսակցութիւններու դիմումը եւ եկաւ հաստատելու Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի Մայիսի 19-ի որոշումը՝ համամասնական ընտրակարգով պատգամաւորներ ընտրուելու մասին:

Դատարանը արձանագրեց, որ Մայիսի 12-ի խորհրդարանական ընտրութիւններու ընթացքում տեղ գտած են այնպիսի խախտումներ, որոնք չէին կրնար ազդել ընտրութիւններու արդիւնքներուն վրայ:

Մէկ այլ կէտով Դատարանը որոշեց շարք մը ընտրատեղամասերու յանձնաժողովներու արձանագրութիւններուն մէջ կատարուած փոփոխութիւններուն առնչուող նիւթերը ուղարկել Գլխաւոր Դատախազութիւն՝ յանձնելու:

Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեան ընթերցելով որոշումը արձանագրեց, որ հակառակ ընտրական օրէնսգիրքի մէջ կատարուած բարեփոխումներուն կան որոշ բացթողումներ, որոնք խոչընդոտ կը հանդիսանան ընտրական իրաւունքի դատական պաշտպանութեան հարցերով:

Սահմանադրական դատարանի նախագահի նշած խախտումներու մէջ մասը արձանագրուած էր նաեւ միջազգային դիտորդներու միջանկեալ գեկոյցներուն մէջ:

Սահմանադրական Դատարանի 47-էջոց որոշման հրապարակման պահուն դիմող կողմէն ոչ ոք ներկայ էր: Ընդդիմադիր կուսակցութիւններու ներկայացուցիչները նիստերու աւարտէն առաջ իսկ հեռացած էին դահլիճէն, երբ Դատարանը մէկը միւսի ետեւէն մերժած էր իրենց ներկայացուցած բոլոր դիմումները:

### ՔՈՉԱՐԵԱՆ - ԱԼԻԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՆ ՅԱՌԱՋՈՆԹԱՑ ԶԷ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ

Յունիս 9-ին Սան Պետերբուրգի մէջ կայացած Ռոբերդ Քոչարեան-Իլհամ Ալիեւի հանդիպումի ընթացքին որեւէ յաւաքաբանութիւն չէ արձանագրուած՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ուղղութեամբ:

Երէք ժամէ աւելի տեւած հանդիպման ժամանակ կարելի չէ եղած համաձայնութեան գալ մի քանի հիմնական հարցերու շուրջ, որոնցմէ ամենէն կարեւորը Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցն է: Ատրպէյճանական կողմը պնդած է, որպէսզի միջանկեալ համաձայնագրի մէջ, Ղարաբաղի կարգավիճակի մասին ընդհանրապէս որեւէ կէտ չլինի, իսկ հայկական կողմը պնդած է, որ անպայման պէտք է նշուած ըլլայ այն քայլերը, որոնց համաձայն Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի պիտի ունենայ հանրաքուէ՝ որոշուելու համար Ղարաբաղի կարգավիճակը:

Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներու հանդիպումէն յետոյ որեւէ յայտարարութիւն չհրապարակուեցաւ:

ԵԱՀԿ Մինսկի խումբի համաձայնագրերը իրենք եւս յայտարարութիւններ չկատարեցին՝ նույնիսկ խուսափելով յաւաքից հանդիպումներու մասին խօսելէ:

### 2008-Ի ՊՈՒՏՃԵՆՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ ՊԻՏԻ ՍՏԱՆԱՅ 68 ՄԻԼԻՈՆ ՏՈՒՐ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յունիս 12-ին Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան Յատկացումներու Յանձնաժողովը հաստատեց 2008 թուականի պիւտձէի արտաքին օժանդակութեան օրինագիծը, ուր տեղ գտած են նաեւ յատկացումներ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի համար:

Պիւտձէի նախագիծի համաձայն Հայաստանին պիտի տրամադրուի 68 միլիոն տոլար, իսկ Լեռնային Ղարաբաղին՝ 6 միլիոն տոլար:

Ներկայացուցիչներու Տան անդամ Ատէմ Շիֆ (Դեմոկրատ, Կլիւտէլ-Փասատինա) մաս կազմելով Յատկացումներու Յանձնաժողովին յաջողած է օրինագիծէն ներս ներմուծել նաեւ, Հայաստանի եւ Ատրպէյճանի տրուելիք գինուորական օժանդակութեան մէջ հաւասարակշռութիւն պահելու պայմանը:

«Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ լաւ բարեկամներ ու դաշնակից են Միացեալ Նահանգներու համար եւ այս օրինագիծը կը ցոլացնէ մեր սերտ յարաբերութիւնը: Ես ուրախ եմ որ, անոնք պիտի ստանան այս անհրաժեշտ օժանդակութիւնը, որ մեծապէս օգտակար պիտի ըլլայ Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ ժողովուրդներուն», - օրինագիծի վաւերացումէն ետք յայտարարեց գոնկրէսական Ատէմ Շիֆ:

ԸՆԿՆՈՒՄ ԵՎ ՄԱՍԻՍ

ՔՈՉԱՐԵԱՆԸ «ԿԸ ԾԱՆԻ՞»  
ՂԱՐԱԲԱՂԸ, ԹԵ՞ ԿԸ ԳՐԱԻԻ ԱՄԲՈՂԶ  
ԱՏՐՊԵՅՃԱՆԸ

Մեզանից շատերը, որոնք հանգամանքների բերումով սկսել են հետաքրքրվել Լեոնային Ղարաբաղի հակամարտության կարգադրման գործընթացով, քիչ թե՛ շատ հասկանում են, որ այդ կնճռոտ խնդրի չկարգադրուած վիճակը անմիջականորեն ազդում է Հայաստանի բնականոն զարգացմանը:

Շատերն են հասկանում, որ քանի դեռ ԼՂ հակամարտությունը չի կարգադրվում, Հայաստանը չի կարողանալու գարգացնել իր սնունդը, կազմակերպելու ազատ եւ արդար ընտրություններ, պաշտպանելու մարդու իրաւունքները: Սա այն աքսիոմն է, որը հասկանալի է գրեթէ բոլոր հայերին, որոնք գտնուում են ԼՂ հարցի մասին տեղեկատուութիւնների քառույթի մէջ:

ԼՂ հակամարտութեան կարգադրման գործընթացի շուրջ ամէն անգամ թէ՛ ժամուած են կրքերը, երբ նախագահների մակարդակով տեղի է ունենում հանդիպում: Նախ պաշտօնական լրատուամիջոցներն են սկսում տարբեր տրամաչափի տեղեկութիւններով հեղեղել Հայաստանը, չետոյ առհասարակ լրատուամիջոցներն են սկսում խօսեցնել այս կամ այն քաղաքական գործչին: Յետոյ հասարակութեան խնդրով մտահոգ զանգուածը փորձում է հասկանալ, թէ՛ իրականում ինչ է կատարուած: Շատ յաճախ չի յաջողւում, քանի որ այսօր Հայաստանում չկայ մէկը, որը կարողանում է յօդաբաշխ կերպով արտայայտել իր դիրքորոշումը ԼՂ հարցի մասին: Իսկ նման տեղեկատուական խառնաշփոթի մէջ հասարակութիւնը իր ժողովրդական մեթոտներով է հասկանում ԼՂ հակամարտութիւնն ասուածը: Ու այդ ժողովրդական մեթոտները անէ՛ծքներն են, հայհոյանքներն են ու նման բանաւոր բանահիւսական արժէքները:

Ժամանակին Առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը շրջանառութեան մէջ դրեց «Պատերազմ, թէ՛ խաղաղութիւն» յօդուածը, որը որոշակի կերպով պատկերացումներ ձեւաւորեց ԼՂ հակամարտութեան մասին: Այդ պատմական յօդուածը միտումնաբէր էր լայն քննարկում առաջացնել հասարա-

կութեան շրջանում հակամարտութեան կարգադրման ուղիների շուրջ: Իհարկէ, քննարկումը տեղի չունեցաւ, ըստ որոշ վերլուծաբաններին՝ հենց այդ յօդուածը որոշակիացրեց կատարուելիքը, եւ Ղարաբաղեան հակամարտութեան կարգադրման ուղիների հողի վրայ տեղի ունեցաւ 1998թ. թաւաշէջ յեղաշրջումը:

Ռոբերդ Քոչարեանը, որը Յուլիսի 9-ին Սանկտ-Պետերբուրգում հանդիպելու է Իլհամ Ալիեւին եւ կարծես այդ հանդիպումից այնքան էլ մեծ ակնկալիքներ չունի, ժամանակին թաւաշէջ յեղաշրջման առանցքում էր յայտնուել Լեոնային Ղարաբաղը պահող հերոսի կերպարը մարմնաւորողի պատմուճանով: Նրա այդ «հերոսական» կերպարը, իհարկէ ժամանակին «լեզուի» էր, քանի որ մարդկանց գրեթէ մեծամասնութիւնը կարծում էր, որ նա, ծնունդով լինելով ղարաբաղցի, երբեք մեր հայրենիքի պատմական տարածքները չի տալ ստրկացմանը: Շատ ժամանակ է անցել նրա յայտնութիւնից: Շատ բան է փոխուել: Այսօր շատերը արդէն համոզուել են, որ ժամանակին Ղարաբաղը պահող «հերոս» Քոչարեանը այլ ելք չունի, քան ազատագրուած տարածքները յանձնել Ատրպէյճանին: Այսօր շրջանառու էն Քոչարեանի՝ առանց այն էլ գրոյին ձգտող վարկանիշին վնասող հազար տեսակի վարկածներ: Քոչարեանն, անշուշտ, այնքան ապագային չէ, որ հոգու խորքում համաձայն լինի տարածքները յանձնել ստրկացմանը: Որքան էլ նրան լեզուի մէջ համարեն, նա այդ քայլին չի ցանկանայ գնալ: Եթէ այնուամենայնիւ գնայ այդ քայլին, ուրեմն ստիպուած է: Չէ՞ որ Ատրպէյճանը տնտեսապէս հզօրանում է: Չէ՞ որ ստրկացմանական նախընտրութիւնը միջազգային շուկայում կարեւոր դերակրու է: Այսօր տարածքները յանձնելու լուրերը յամառօրէն շրջանառու են ամենուր, հասնում իւրաքանչիւր գիտակից հայի ականջին, ինչը վկայում է, որ ժամանակը չի աշխատում Հայաստանի օգտին: Հակամարտութեան կարգադրման համար Քոչարեանը պիտի այնպիսի դիրք գրաւի, որ չարժա-

նանայ «ժողովրդի դաւաճան» կամ «Ղարաբաղը ծախող» բնորոշումներին: Իսկ այսօր հակամարտութեան կողմերը ինչպիսի համաձայնագիր էլ ստորագրեն, Քոչարեանը վաստակելու է այդ պիտակները: Եւ սա այն պատճառով, որ Քոչարեանը ոչ թէ տանու է տուել դիւանագիտական պատերազմը տարիների ընթացքում, այլ նրա համար, որ ինքը ոչ իրական լուծման առաջարկներ անելով է ժամանակին դարձել ժողովրդի բոլորակալ կուռքը, յայտնութիւնով յեղաշրջման հպիկեւտորուում: Պատճառն այն է, որ նրա դիրքաւորումը հենց սկզբից եղել է սխալ:

Եթէ Առաջին նախագահը ժամանակին առաջարկում էր հակամարտութեան կարգադրման մի տարբերակ, որը քիչ թե՛ շատ այսօրուայ առաջարկուելիք լուծումների համեմատ գերադասելի էր, ապա Քոչարեանը եւ նրա թիմը, առաջարկում են մի տարբերակ, որին շատերն այսօր անտեղեկ են:

Իհարկէ, հասարակութիւնը չի պահանջում, որ նա խախտի հակամարտութեան գործընթացի գաղտնիութեան սկզբունքը եւ բացառու չենք կայացնել իրավիճակը: Սակայն, գոնէ պիտի իր դիրքորոշումն արտայայտի իր ժողովրդի առջեւ. չէ՞ որ նա իրեն լեզուի է համարում (լեզուի մի նախագահ լինելը ենթադրում է պարբերական հաշուետուութիւններ տալ ժողովրդին, եւ դրա համար պարտադիր է, որ Սահմանադրութիւնը հաշուետուութիւնների պարտադրանքի նորմ տեղծի): Երբ Քոչարեանը կամ իր թիմի ներկայացուցիչները յայտարարում են, որ Ղարաբաղը մերն է, մի թիւ գոչ հետ չենք տալու, սա երեւակայութեան ոլորտից է: Մի՞ք է:

Իհարկէ Առաջին նախագահի պատմական յօդուածը կարող էր մեզանում դառնալ սքանչելի նախադէպ ԼՂ կարգադրման գործընթացի վերաբերեալ պետական գործիչների՝ հասարակութեանը իրենց դիրքորոշումներին հաղորդակից դարձնելու համար: Եւ եթէ այնպէս է ստացուել, որ այդ յօդուածը նախադէպ չի դարձել, քանի որ այդ յօդուածը 1997թ. գրուել էր գոտ ժամանակի հրամայականով, ապա այսօրուայ ժամանակին էլ իր հրամայականներն ունի:

Շատերն են այսօր իրենց ականջների ծայրով լսում, որ որոշ

ազատագրուած տարածքներ Հայաստանը պատրաստուած է յանձնել Ատրպէյճանին: Մի՞թէ չարժէր մի յօդուածով կամ եթէ տարրական տառաձանաչութիւն չկայ, բանաւոր մի ելույթով, հասարակութեանը իրազեկ պահել, յատակ յայտարարել, թէ՛ ինչ տարածքների մասին է խօսքը: Չէ՞ որ, եթէ այդ տարածքները յանձնելու անհրաժեշտութիւնը առաջացաւ, այս մի նախագահը չյանձնի՞ միւսն է յանձնելու: Ինչո՞ւ է յապաղում Քոչարեանը:

Ինչեւէ. ստեղծուած իրավիճակը, երկու նախագահների հանդիպումից առաջ եւ առհասարակ՝ ընդհանրապէս, թոյլ է տալիս ենթադրել, որ հասարակութեանը փորձում են պահել տեղեկատուական քառույթի մէջ, որպէսզի ոչինչ չհասկացուի: Իսկ Յուլիսի 9-ի հանդիպումը, որքան էլ համանախագահները լաւատես լինեն, չի կարողանալու որոշակի առանցքային խնդիրներ լուծել, քանի որ Քոչարեանը պատրաստ չէ ստորագրել կարգադրման պայմանագիրը: Նա չի կարող ստանձնել այդպիսի պատասխանատուութիւն, քանի որ, ինչպէս Լեւոն Տէր-Պետրոսեանի դէպքում եղաւ, որոշ ուժեր կը ներկայացնեն հրաժարականի պահանջ, որը ոչ այնքան կը հանդիսանայ քաղաքականութիւնից հեռանալու, որքան ժողովրդի առջեւ պատասխանատուութեան ենթարկելու պահանջ: Փաստօրէն Քոչարեանը այսօր հերոսաբար յայտնուել է այն կէտում, որտեղ 10 տարի առաջ գտնուած էր Առաջին նախագահը: Կը գրի՞նա իր «պատմական յօդուածը», թէ՛ այնուամենայնիւ, կը կարծի, որը ինքը հերոս է եւ կարող է Ատրպէյճանին ծնկի բերել, եթէ այդ երկիրը որեւէ մեզ համար ոչ ձեռնտու պահանջ չհնչեցնի:

ՄԱԹԵԻՈՍ ՄԱՐԿՈՍԵԱՆ  
«ՏԱՐԵԳԻՐ»

ՃԱՇՏԱՑՄԱՆ ՇՐՋԱՆ

Եթէ անգամ կային այնպիսի անյուսալի լաւատեսներ, որոնք Քոչարեան-Ալիեւ անկողնայեւորութեան հանդիպման հետ ինչ-որ յոյսեր էին կապում, ապա այժմ ի դերեւ ելան նաեւ նրանց սպասելիքները: Հասկանալի է, իհարկէ, որ լաւատես ասելով, ամենեւին նկատի չունենմ, ասենք՝ ամերիկացի միջնորդ Մեթիւ Բրայզային կամ նրա գործընկերներին, որոնք իրենց տարածաշրջանային այցերի ընթացքում ժամանակ առ ժամանակ հանդէս էին գալիս տարօրինակ ոգէշնչող յայտարարութիւններով՝ մասնաւորապէս, օգտագործելով այնպիսի արտայայտութիւններ, ինչպիսիք են՝ «համաձայնեցուած հարցերի շրջանակը փոքրացել է», «տարածաշրջանները մօտ են գրոյին» եւ այլն: Մինսկի խմբի համանախագահների դրական տրամադրուածութիւնը նրանց մանդատի պարտադրանքն է. նրանք ի պաշտօնէ չեն կարող յոռետես լինել, քանի որ այդ կերպ լուրջ

կասկածի տակ կը դնեն իրենց առաքելութեան նպատակադրմանը թիւնն ու հակամարտող կողմերին ընդհուպ կը մօտեցնեն ռազմական բախման վտանգին: Իսկ դա, գոնէ այսօր, ամենեւին չի մտնում միջնորդ երկրների ծրագրերի մէջ: Իսկ ԼՂ հակամարտութեան կարգադրման գործընթացը՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի դեկավարների վերջին բանակցութիւնների լիակատար տապալումով, թեւակոխեց երկարատեւ ճահճացման շրջան: Նշենք, որ աւելի քան երեք ժամ տեւած վերոյիշեալ հանդիպման ժամանակ կողմերին չի յաջողուել համաձայնութեան գալ յատկապէս Ղարաբաղի կարգավիճակին առնչուող հարցերի շուրջ: Ըստ ստացուած տեղեկութիւնների, Ալիեւը պնդել է, որ միջանկեալ համաձայնագրում ԼՂ կարգավիճակի մասին ընդհանրապէս որեւէ կէտ չլինի, մինչդեռ Քոչարեանը պարտադիր է համարել ամրագրել այն մեխանիզմը, որով հետագայում

պէտք է անցկացուի Ղարաբաղի կարգավիճակը որոշող հանրաքուէն:

Քիչ աւելի վաղ ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիէն երեւանում յայտարարել էր, որ Սանկտ Պետերբուրգում յաջողութիւն չունենալու դէպքում բանակցային գործընթացը նկատելիօրէն կը տուժի, քանի որ առաջիկայում սպասուում են նախագահական ընտրութիւններ ինչպէս Հայաստանում, այնպէս էլ Ատրպէյճանում: Հիմա արդէն ստոյգ կարելի է ասել, որ կարգադրումը յետաձգուեց առնուազն մինչեւ 2009 թուականը: Չի բացառուում, իհարկէ, որ մինչ այդ միջնորդները դարձեալ ինչ-որ կլիշեներ շրջանառեն, ասենք՝ «հնարաւորութեան պատուհան», «յոյսի դուռ» կամ «ակնկալիքների օդանցք» արտայայտութիւնների տեսքով: Դրանից, սակայն, խնդրի էլուծութիւնը չի փոխուել: Փաստ է, որ այսօր ոչ ոք կարգադրմանը պատրաստ չէ:

ՏԻԳՐԱՆ ԱԻԵՏԻՍԵԱՆ  
«ԱՌԱԻՕՏ»

**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԶՆԱՍԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԹԸ ԱՐՇԱԿ ՊԱՇՏՏԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՍԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ  
  
Գեղ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ՀՐԱՆԴ ԲԱԳՐԱՏԵԱՆ.

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԻՒՆԸ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՍՊԱՍՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Հայաստանի նախկին վարչապետ Հրանդ Բագրատեանի կարծիքով, անցած խորհրդարանական ընտրությունները միջազգային հանրությունը դրական գնահատեց սոսկ այն պատճառով, որ Հայաստանի ներկայ իշխանություններից է սպասում Ղարաբաղեան հարցի լուծումը:



Հայաստանի նախկին վարչապետ Հրանդ Բագրատեանի թիւն փոխեն»:

«Եթէ դա Քոչարեանը է, ապա դրսից հասկացնել տուեցին, որ կ'ուզենան, որ Քոչարեանի շարունակողը լինի այսօրուայ իշխանության մէջ գտնուող մարդ, որ վաղը չասի՝ ես ուզում եմ գրոյից սկսել», - լրագրողների հետ հանդիպման ժամանակ երեքշաբթի օրը ասաց Բագրատեանը: - «Նրանց այսօր պէտք է Հայաստանի ներսում իշխանութեան փոփոխութիւն: Աւելին՝ նոյնիսկ տնտեսական մարմինները պատրաստ են անհետեւ թուփռութիւններ ասել Հայաստանի վերաբերեալ, բացարձակ ստեր, միայն թէ ժողովուրդը հանգստանայ, Հայաստանում ներքաղաքական պրոբլեմ այս պահին չլինի: Երբ որ որեւէ թուղթ ստորագրի, գուցէ շտապեն յաջորդ օրը իշխանութեանը»:

«ԻՄ ՍԱՐՈՒԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՈՉ ՄԷԿԻ ԶՍԵՂԱԴՐԵԼ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅՔ-Ֆէ»:  
«Իմ պիչմենտ» դաշինքի անդամ Վահագն Խաչատրեանն Յունիս 8-ի միասնական ընդդիմութեան հանրահաւաքի մասնակիցներին յայտնեց, որ թիւ 17 ընտրատարածքից մեծամասնականով ընտրուած պատգամաւոր Խաչիկ Մանուկեանը չպէտք է զարմանար, երբ իմացաւ, որ այլեւս պատգամաւոր է:

Հարցին, թէ արդեօք Հայաստանի ներկայ իշխանութիւնները կը լուծեն Ղարաբաղեան հիմնադրուած իրենց պաշտօնավարման ընթացքում, նախկին վարչապետը պատասխանեց. - «Ե՛լ այս, ե՛լ միւս իշխանութիւնները, ե՛լ ցանկացած կուսակցութիւն, եթէ շանս ունենայ չլուծելու՝ չի լուծի, որովհետեւ լուծել բոլոր դէպքերում նշանակում է, որ որոշակի ոչ բարեհաճ գիշումներ պէտք է արուեն»:

բաւարարուի միայն նման գրութեամբ: Նա կարծում է, որ Սերժ Սարգսեանի գրպանում կան նաեւ այսպիսի գրութիւններ. «Իմ մահուան դէպքում ոչ մէկին չմեղադրել»:  
«Իմ պիչմենտի» ղեկավարը համարում է, որ ներկայումս կեանքի եւ մահուան պայքարի մէջ է յայտնուել Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեանը: Այսինքն՝ նրա որոշումից է կախուած, թէ ինչպէս կը տնօրինեն նրա հետագայ ճակատագիրը Ռոբերտ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը:

Հանրահաւաքում ելոյթ ունեցաւ նաեւ ԿԸՅ-ում «Արդարութեան» ներկայացուցիչ Ֆելիքս Խատրեանը: Ըստ նրա՝ ընտրութիւնների վերաբերեալ արձանագրութիւնների 90 տոկոսը եղել են ջնջումներով:

Հանրահաւաքի ընթացքում մասնակիցների թիւը կրկնապատկուեց՝ հասնելով մինչեւ 3000-ի: Նիկոլ Փաշինեանը նրանց յայտնեց, որ հանրահաւաքները շարունակուելու են: Նա նոյնիսկ չբացառեց բակային հանրահաւաքները՝ ասելով, որ այսօրուայ հանրահաւաքի մասնակիցներից իւրաքանչիւրն էլ կարող է այդ կազմակերպել:

Յիշեցնենք, որ երբ ԿԸՅ-ն յայտարարեց, թէ Խաչիկ Մանուկեանը մանդատ չվերցնելու դիմում է ներկայացրել, վերջինս ասել էր, թէ ինքը այդպիսի բան չի արել: Ըստ Վահագն Խաչատրեանի՝ ՀՀԿ-ական եւ ԲՀԿ-ական բոլոր պատգամաւորները, նաեւ պատգամաւորի թեկնածուները նման բովանդակութեամբ դիմումներ գրել են ընտրութիւններից մէկ ամիս առաջ եւ դրանք գտնուում են Սերժ Սարգսեանի եւ Գագիկ Մանուկեանի գրպանում: Նրա կարծիքով՝ Խաչիկ Մանուկեանի ճակատագիրը սպասում է ՀՀԿ-ական եւ ԲՀԿ-ական բոլոր պատգամաւորներին՝ կախուած նրանց կուսակցութիւնների ղեկավարների քմահաճոյքից: Նիկոլ Փաշինեանը յաւելեց, թէ ինքը չի կարծում, որ Սերժ Սարգսեանն այնպիսի մարդ է, որ

ՅԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԿՐԱԿՈՑՆԵՐ ԷԶՄԻՎԾՆՈՒՄ

Յունիս 11-ին ոստիկանութեան վաղարշապատի բաժին հաղորդում է ստացուել այն մասին, որ որովայնի մասում ստացած հրազէնային վնասուածքով, անգիտակից վիճակում հիւանդանոց է տեղափոխուել 1957 թուականին ծնուած Սամուէլ Պետրոսեանը: Պարզել է, որ հրազէնային վնասուածքը հասցրել է 1968 թուականին ծնուած Արմէն Յովսէփեանը:

«Ազատութիւն» ռադիոկայանի ունեցած տուեալներով՝ Սամուէլ Պետրոսեանը Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Յակոբ Յակոբեանի վստահուած անձանցից է:

«Նա եղել է իմ շտաբում: Նախընտրական շրջանում նրան հրաւիրել են ոստիկանութիւն եւ փորձել են համոզել, որ ինձ համար չաշխատի: Իմ կարծիքով, այս դէպքը կապուած է ընտրութիւնների հետ: Նրան բազմիցս սպառնացել են հակառակ կողմի ներկայացուցիչները, մասնաւորապէս, Ատաման մականունով մի անձնաւորութիւն, որը եղել է Սէյրան Սարոյեանի շտաբից», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասել է Յակոբ Յակոբեանը:

ՆՇԱՆԱԿՈՒԵՑԻՆ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ռոբերտ Քոչարեանը Յունիսի 8-ին հրամանագիր է ստորագրել ՀՀ նախագահի 2002թ. Մարտի 16-ի հրամանագրում փոփոխութիւններ եւ լրացում կատարելու մասին: Հրամանագրով, ՀՀ մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերի նախարարութիւնը վերանուանուել է Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի նախարարութիւն:

ՀՀ կառավարութեանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական կոմիտէն վերակազմաւորման ձեւով վերակազմակերպուել է ՀՀ սպորտի եւ երիտասարդութեան հարցերի նախարարութեան: Այդ կապակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան նախագահի 2002 թուականի Մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կառուցումը սահմանելու մասին» հրամանագրում աւելանում են մշակոյթի նախարարութիւնը եւ սպորտի ու երիտասարդութեան հարցերի նախարարութիւնը:

Քոչարեան նոյն օրը մէկ այլ հրամանագիր է ստորագրել կառավարութեան անդամներ նշանակելու մասին: Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան անդամներ են նշանակուել:

Աղուան ՎԱՐԴԱՆԵԱՆԸ- ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար  
Յարութիւն ՔՈՒՇԿԵԱՆԸ- ՀՀ

առողջապահութեան նախարար  
Ներսէս ԵՐԻՅԵԱՆԸ- ՀՀ առևտրի եւ տնտեսական զարգացման նախարար

Գէորգ ԴԱՆԻՏԼԵԱՆԸ- ՀՀ արդարադատութեան նախարար  
Վարդան ՕՍԿԱՆԵԱՆԸ- ՀՀ արտաքին գործերի նախարար

Արամ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ- ՀՀ բնապահպանութեան նախարար  
Դաւիթ ԼՈՒՔԵԱՆԸ- ՀՀ գիւղատնտեսութեան նախարար

Արմէն ՄՈՎՍԻՍԵԱՆԸ- ՀՀ Կրթութեան նախարար  
Մանուկ ԹՈՓՈՒՋԵԱՆԸ- ՀՀ կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարար

Լեւոն ՄԿՐՏՁԵԱՆԸ- ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարար  
Յասմիկ ՊՕՂՈՍԵԱՆԸ- ՀՀ մշակոյթի նախարար

Միխայիլ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ- ՀՀ պաշտպանութեան նախարար  
Արմէն ԳՐԻԳՈՐԵԱՆԸ- ՀՀ սպորտի եւ երիտասարդութեան հարցերի նախարար

Հովիկ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԸ- ՀՀ տարածքային կառավարման նախարար  
Անդրանիկ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ- ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար

Վարդան ՎԱՐԴԱՆԵԱՆԸ- ՀՀ քաղաքաշինութեան նախարար  
Վարդան ԽԱԶՍԱՐԵԱՆԸ- ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար:

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ»-Ը ՍՏԱՑԱՒ ՄԱՆԴԱՏՆԵՐԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
«Ժառանգութիւն» կուսակցութեան եօթ պատգամաւորներն Յունիս 12-ին Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովում ստացան իրենց մանդատները:

Նոր գումարման խորհրդարանի առաջին նիստից առաջ կուսակցութեան առաջնորդ Բաֆֆի Յովհաննիսեանը յայտարարել էր, թէ «Ժառանգութիւն»-ը չի վերցնի մանդատները, քանզի Ազգային ժողովից պատշաճ ծանուցում չի ստացել եւ սպասում է ընտրախախտումների վերաբերեալ Սահմանադրական Դատարանի վճռին: Կիրակի օրը դատարանը վաւեր ճանաչեց ընտրութիւնները:

«Խմբակցութիւնը ոչ միայն ժողովրդավարական, ազգային, ազատական արժէքներ է պնդելու խորհրդարանում, այլեւ յարգանքը սեփական օրէնքի եւ Սահմանադրութեան նկատմամբ», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Բաֆֆի Յովհաննիսեանը:

Թէ ով կը ղեկավարի խմբակցութիւնը եւ նրա անդամներից ով

որ մշտական յանձնաժողովին կ'անդամակցի, կ'որոշուի խմբակցութեան՝ այսօր կամ վաղը կայանալիք անդրանիկ նիստում:

Պատասխանելով այն հարցին, թէ արդեօք խորհրդարանական ընդդիմութիւնը լիովին արեւմտամէտ է, Բաֆֆի Յովհաննիսեանն ասաց. - «Հայաստանամէտ ուժ է «Ժառանգութիւն»-ը: ՆԱՏՕ-ին անդամակցութիւնը՝ Հայաստանի նոր սերնդի ղեկավարները պէտք է որոշեն եւ, հնարաւոր է, որ առաջիկայ հինգ - տասը տարիների ընթացքում դա օրակարգում լինի, բայց ներկայ դրութեամբ Հայաստանը պէտք է դառնայ ինքնիշխան պետութիւն, իրեն յարգող պետութիւն, ոչ թէ կեղեւային, բանանային հանրապետութիւն: Եւ սա ենթադրում է փոխադարձ յարգանք՝ թէ ռազմավարական, աւանդական, եւ թէ նոր գործընկերների հետ»:

Խորհրդարանական տեղեր նուաճած միւս ընդդիմադիր ուժը՝ «Օրինաց երկիր»-ը, առայժմ չի վերցրել մանդատները:

ՀԱՅՑ ԿԱՐԴԱՆ ԱՅՎԱԶԵԱՆԻ ԴԵՄ

Հանրապետական վարդան Այվազեանը 2007 թուականի Յունիսի 6-ից դադարեց ՀՀ բնապահպանութեան նախարար լինելուց եւ զբաղուելու է օրէնսդրական գործունէութեամբ: Դեռեւս 2006 թուականին Հայաստանում մի քանի ամիս շարունակ լուրեր էին շրջում, որ վարդան Այվազեանը ամերիկեան մի ընկերութեան լիցենզիա տալու համար 3 միլիոն ԱՄՆ դոլար կաշառք է պահանջել: Անգամ ասում էին, որ այդ ամէնը արձանագրուած է տեսաերկի վրայ եւ փոխանցուած ՀՀ կառավարութեանը: Այս լուրերին եւ «հայկական», եւ «ամերիկեան» հերքումներ հետեւեցին, սակայն դրանք չստակ չէին եւ կասկածների տեղիք տալիս էին: Իսկ հիմա, ըստ որոշ տեղեկութիւնների, ԱՄՆ-ից Հայաստանի իշխանութիւններին տեղեկացրել են, որ չիշեալ ամերիկեան ընկերութեան դիմումով քննութիւն է սկսուել, որում ներգրաւուելու է նաեւ վարդան Այվազեանը: Միջազգային դատարանն է այդ հարցով զբաղուելու, եւ միջազգային այս կառույցը պարզապէս փորձում է պարզել, թէ ՀՀ կառավարութեան անդամը ինչպէս է ներկայացուած լինելու՝ անձամբ, թէ փաստաբանի միջոցով եւ նման այլ հարցեր:

Ի դէպ, մեր տեղեկութիւններով, միջազգային դատարանում հայց կայ նաեւ Հայաստանի կառավարութեան դէմ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի Ծրջանի Վարիչ Մարմինը կ'ողջունէ ՄԱԿ-ի Ապահովական Խորհուրդի քիւ 1757 բանաձեւը: Լիբանանցի ժողովուրդը մեծ յոյսեր ունի նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրիի ոնիրն ու անոր հետեւող քաղաքական ոնրափորձերը քննելու կոչուած միջազգային դատարանի կազմութեան հանդէպ: Միայն միջազգային դատարանով կարելի է յայտնաբերել ու արժանի պատիժ սահմանել բոլոր անոնց հանդէպ, որոնք շուրջ երկու տարի է Լիբանանը միջնորդած են ոնրափորձերու եւ պայթուածներու ոլորապտոյտին մէջ:

Միջազգային դատարանին շնորհիւ Լիբանան նաեւ կը դադարի անհատոյց ոնիրներու քատերաքեմ մը ըլլալէ: Միջազգային դատարանը իր պատժող եւ կանխարգիլող հանգամանքներով, միակ երաշխիքն է որ կրնայ ապահովել Լիբանանի խաղաղութիւնն ու ապահովութիւնը:

Դժբախտաբար, քաղաքական կարգ մը ուժեր, խօսքով միջազգային դատարանի կազմութեան կողմէն ըլլալով, գործնապէս փորձեցին խոչընդոտել զայն: Նոյն ուժերը այսօր ոնր ոնրափորձերով եւ ներքին տակնուվրայութիւններով կը սպառնան երկրին ապահովութեան: Միայն յանգագործն է, որ կը վախճայ դատարանէն եւ հատուցման սպառնալիքն է: Լիբանանի խաղաղութիւնը, անկախութիւնը, գերիշխանութիւնն ու ապահովութիւնը անկեղծօրէն ցանկացող ուժերը միջազգային դատարանին հետեւ եւ սարսափելու պատճառ մը չունին: Թիւ 1757 բանաձեւը այս ուժերուն յաղթանակն է, նշմարտութիւնը պահանջող Լիբանանցի ժողովուրդին յաղթանակն է:

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐՋԱՆԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

« ՀԱՋԱՐԱՄԵԱԿԻ ՄԱՐՏԱՅՐՈՒԷՐՆԵՐ » ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԲԱՑՈՒՄԸ



Գրասենեակի քաղաքացիական կոնսուլները ողջունում ենք Հայաստանի խորհրդարանի ընտրութիւնները եւ շնորհակտում ենք Հայաստանի բնակչուհի Հայաստանի ընտրութիւններին համեմատ աւելի յաջող ընտրութիւններ ունենալու համար», - Յունիս 11-ին Երեւանում «Հազարամեակի մարտահրաւէր-Հայաստան» պետական ոչ առեւտրային կազմակերպութեան գրասենեակի պաշտօնական բացման արարողութեան ընթացքում յայտարարեց «Հազարամեակի մարտահրաւէր» ամերիկեան կորպորացիայի գլխաւոր գործադիր տնօրէն Ջոն Դանիլովիչը:

Սա պարոն Դանիլովիչի հնչեցրած միակ նախադասութիւնն էր, իսկ լրագրողներին բաժանուած հարցազրույցի մէջ նրա խօսքն աւելի երկար ու ամփոփ էր: Յիշեցնենք, որ Ջոն Դանիլովիչը մի քանի անգամ գրաւոր դիմել է Ռոբերտ Քոչարեանին եւ նշել, որ ՀՀ-ին անհրաժեշտ է արդարացի կառավարում, հակառակ դէպքում ՀՀ-ն կարող է զրկուել «Հազարամեակի մարտահրաւէր» ծրագրից: Ընտրութիւնները վերաբերեալ պարոն Դանիլովիչի գնահատականից կարելի է ենթադրել, որ այդ վտանգը ինչ-որ ժամանակով մեզ չի սպառնում:

Ջոն Դանիլովիչը հրաժարուեց պատասխանել լրագրողների հարցերին, եւ նրա փոխարէն խօսեց «Հազարամեակի մարտահրաւէր» Հայաստանի ծրագրի կառավարման խորհրդի անդամ, Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան խաչատրեանը: Վարդան խաչատրեանը տեղեկացրեց, որ «Հազարամեակի մարտահրաւէր» ծրագրի Հայաստանի մասն ընթանում է բաւականին լաւ տեմպով, եւ մինչեւ տարեկան կ'աւարտուի ծրագրի ոլորտների վերաբերեալ նախապատրաստական նախագծային աշխատանքի փուլը:

«Հազարամեակի մարտահրաւէր ծրագրով Հայաստանն արդէն ստացել է 5,5 միլիոն դոլար, եւս 6-7 միլիոն կը ստանայ մինչեւ տարեկանը: Ընթացիկ տարուայ վերջում կը սկսուի արդէն ծրագրի բուն իրականացումը՝ ճանապարհները եւ ջրային ոռոգման ցանցերը: Մենք հիմա մրցույթներ ենք արել հիմնական նախագծային, խորհրդատուական մասերով, որ մարդիկ պէտք է նախագծերն ամբողջութեամբ պատրաստեն, որից յետոյ դենք մրցույթի», - ասաց Վարդան խաչատրեանը:

ԲՈՐԻՍ ՆԵՄՑՈՎԸ ՀԱՅ ԱԶԱՏԱԿԱՆՆԵՐԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ե ՏԱԼԻՍ ՄԻԱԴՈՐՈՒԵԼ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՑ»: Ռուս ազատական լեզափոխութեան համահեղինակներից մէկը՝ Բորիս Նեմցովը, խորհուրդ է տալիս հայ ազատական բարեփոխականներին չվհատուել. - «Ռեֆորմիստները, բարեփոխականները ամենուր բախտակից են, նրանք յայտնուում են նոյն դժուարութիւնների առջեւ»: «Ազատութիւն» ռադիոկայանի հայկական ծառայութեանը տուած բացառիկ հարցազրույցում Ռուսաստանի Ազատութեան միութեան հիմնադիրներից մէկը խօսում է բարեփոխականների, այդ թւում հայ ազատականների դժուարին ճակատագրի մասին:

«Բարեփոխականները ամէնուր անիծուած են: Նրանք անիծուած են ոչ միայն յետկոմունիստական տարածքում, նրանք անիծուած են նաեւ զարգացած երկրներում: Մարգարեաթեթեթը, որը շատ հիւանդագին բարեփոխումներ էր անում Մեծ Բրիտանիայում, եղել է ամենատեղի անձնաւորութիւններից մէկը: Նրա նկատմամբ վերաբերմունքը փոխուեց միայն այն բանից յետոյ, երբ բրիտանացիները տեսան, թէ որքան արդիւնաւէտ է զարգանում երկիրը», - ասաց Նեմցովը՝ շարունակելով. - «Ռուսաստանեան բարեփոխականների պատմութիւնը շատ աւելի դրամատիկ է: Օրինակ, Ալեքսանդր Երկրորդ ցարը ռուս ժողովրդին ազատեց ստրկութիւնից՝ վերացնելով ճորտատիրական իրաւունքը. միլիոնաւոր մարդիկ ստացան հող, ազատութիւն: Չնայած դրան, վեց անգամ մահափորձ է եղել Ալեքսանդր Երկրորդի դէմ եւ ի վերջոյ սպանել են նրան: Գորբաչովը եւ Ելցինը, որոնք թէեւ իրար չէին սիրում, բայց միասին փորձեցին ազատագրել երկիրը, նոյնպէս անիծուել են: Նրանք, բարեփոխաբար, չեն սպանուել, բայց իբրեւ քաղաքական գործիչներ ոչնչացուել են»:

Նեմցովի խօսքերով, Հայաստանը այս հարցում բացառութիւն չէ. այստեղ էլ «բարեփոխականները անիծուած են», եւ «այն մարդիկ, ովքեր չնայած դժուարութիւններին գնում են դրան, արժանի են յարգանքի». - «Կարծում եմ, որ հայ ժողովուրդը ինչ-որ ժամանակ անց, գուցէ դա անմիջապէս չի լինի, կը գիտակցի ազատական տնտեսական վերափոխումների կարեւորութիւնը: Հայ բարեփոխականները, որոնք ստեղծեցին մասնաւոր դասակարգը, որոնք աջակցեցին մասնաւոր ձեռներէցութիւնը, անիծուած են, բայց նրանց գործը ապրում է»:

Բիզնեսի եւ քաղաքականութեան սերտացումը, ըստ Նեմցովի, կրուպցիա է. - «Ռուսաստանում փոխուել է կապիտալիզմի տեսակը: 90-ականներին դա օլիգարխիական կապիտալիզմ էր, խոշոր բիզնեսը շատ ուժեղ ազդեցութիւն ունէր իշխանութեան վրայ, այդ թւում նաեւ՝ քաղաքական, կադրային եւ

տնտեսական որոշումների վրայ: Բայց Պուտինի եւ չեկիստների գալով իշխանութիւնը եւ բիւրոկրատիան սկսեցին ազդել բիզնեսի վրայ: Յատուկ ծառայութիւնների ներկայացուցիչները առանցքային դիրքեր գրադեցրին խոշոր ընկերութիւններում»:

Նրա կարծիքով, հարեւան երկրներից շատերը ուղղակի կրկնօրինակում են այն, ինչ տեղի է ունենում Ռուսաստանում. - «Պուտինի մօտ հիմա բոլորը թշնամի են, նոյնիսկ Լուկաշենկոն է թշնամի: Միակ երկիրը, որի հետ Ռուսաստանը բարեկամական յարաբերութիւններ ունի, Հայաստանն է: Այդ բարեկամութիւնը, սակայն, առաջին հերթին բիւրոկրատիայի մակարդակով է եւ այդ բարեկամութիւնը, ես կ'ասէի, թուրքալի կրկնօրինակման բնոյթ ունի: Այսինքն՝ երբ մարդիկ կրկնօրինակում են ոչ թէ ամենալաւը, այլ ամենավատը»:

«Այն, որ Հայաստանի խորհրդարանում նստած են գործարարները եւ այն, որ առանց վարչական, իշխանական ռեսուրսի շատ դժուար է բիզնեսով զբաղուել Հայաստանում, ինձ մօտ զարմանք չի առաջացնում: Բայց չի կարելի Ռուսաստանից ընդօրինակել վատագոյնը: Ես կարծում եմ, որ բիւրոկրատիայի եւ բիզնեսի սերտացման կոռումպագուած մոդելը Հայաստանը տանում է դէպի յետ», - շարունակեց Բորիս Նեմցովը: - «Չէ՞ որ հայերը խելօք են: Ինչո՞ւ հայերը Ռուսաստանից պէտք է վերցնեն ամենավատը, այսինքն՝ բիւրոկրատների եւ չեկիստների սերտացումը բիզնեսի հետ: Հայաստանը փոքր երկիր է՝ մեծ պրոբլեմներով, եւ բիւրոկրատական կապիտալիզմի կառուցումը երկիրը տանում է դէպի աղէտ»:

Իսկ ի՞նչ խորհուրդ է տալիս ռուս բարեփոխականը իր հայ համախոհներին. - «Նախ եւ առաջ նրանք չպէտք է վհատուեն: Երկրորդ՝ նրանք չպէտք է մանրանան եւ միմեանց հետ հաշիւներ մաքրեն: Լաւ է, որ լինի ինչ-որ միացեալ թիմ: Երրորդ, նրանք հասկանալի է, որ պարտուեցին ընտրութիւններում: Թող հիմա զբաղուեն մանր գործերի քաղաքականութեամբ՝ ասենք փոքր քաղաքների, աւանների մակարդակով: Պէտք է, առաջադրել ձեռներէցութեան աջակցութեան, ցածր հարկերի, բիւրոկրատական վերահսկողութեան մակարդակի նուազեցման, կրուպցիայի նուազեցման գաղափարներ: Ահա այսպիսի փոքր նախագծեր պէտք է առաջարկել եւ իրականացնել թէ՛ ոչ ողջ երկրի մասշտաբով, ապա գոնէ փոքր քաղաքների մակարդակով»:

«Կարծում եմ, որ այսպիսի փոքր դրական օրինակները կարող են ցատկահարթակ դառնալ ապագայ յաղթանակների համար», - եզրափակեց Բորիս Նեմցովը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵՑ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ՈՒԺԵՐՈՒ ԴԻՍՈՒՄԸ

Շաբաւակուած էջ 1-էն

«Հերթական անգամ ականատես ենք լինում դատաւարական ֆարսի, երբ իրականացում է ոչ թէ սահմանադրական, այլ քաղաքական արդարադատութիւն, որի հետագայ ընթացքին մեր մասնակցութիւնը համարում ենք իմաստազուրկ», - Դատարանէն հեռանալով յայտարարած էր «Օրինաց երկիր» կուսակցութեան ներկայա-

ցուցիչ Արտաշէս Աւոյեան: «Ես իմ ափսոսանքն եմ արտայայտում Սահմանադրական Դատարանի՝ այս գործի նկատմամբ ձեւական մօտեցման կապակցութեամբ», - ըսաւ «Նոր ժամանակներ» կուսակցութեան ներկայացուցիչ Ռուբէն Թորոսեան: - «Ես նոյնպէս լքում եմ դահլիճը եւ ցանկութիւն չունեմ լսելու Սահմանադրական դատարանի որոշումը»:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ  
ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ**

**ՎԱԶԳԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ.-**

**«ԿՈՐՑՆԵԼ ՂԱՐԱԲԱՂԸ՝ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԲԱՅԻ ՏԱՐԱԾՔԻՑ, ԲԱՅԻ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԻՑ, ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻՑ՝ ՀՈԳԵԲԱՆՕՐԷՆ ԿՈՏՐՈՒԵԼ ՄԻՆՉԵՒ ՎԵՐՁ»**

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները վերջին այցելություններից յետոյ առաել անխոնջ են յայտարարում, թե արդեն կան դրական ակնկալիքներ Ղարաբաղի խնդրի լուծման բանակցություններից:



ՅուՆիսի 9-ին Սանկտ Պետերբուրգում Քոչարեան-Ալիև հանդիպման շեմին նման յայտարարությունների կապակցությամբ փորձեցինք ստանալ 2008 թուականի ՀՀ նախագահի ընտրություններին իր թեկնածությունն առաջադրելու նպատակ ունեցող, ԱժՄ առաջնորդ Վազգէն Մանուկեանի մեկնաբանությունները:

-Պարոն Մանուկեան, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները շեշտադրում են «լաւատեսօրէն» տրամադրուած լինելու հանգամանքը: Կա՞ն լաւատեսութեամբ հիմքեր հայկական կողմի տեսանկյունից:

-Ես ինքս «լաւատեսական» յայտարարութիւններին չեմ վստահում, որովհետեւ շատ կարեւոր հարց կայ: Ղարաբաղի ղեկավարութիւնը բոլոր այս բանակցութիւններին ընթացքում միշտ յայտարարել է, որ ոչ մի թիզ հող Ատրպէյճանին իր համարած տարածքից չի զիջելու: Միւս տարածքները դեռ մի կողմ թողնենք: Ղարաբաղի անկախութիւնը Ատրպէյճանը չի ընդունում: Այդ դէպքում ինչի՞ համար են բանակցութիւնները: Ինձ համար հասկանալի չէ: Բանակցութիւնները փակուող մէջ են, եւ այստեղ կայ Ատրպէյճանի կոշտ դիրքորոշում: Իսկ ինչո՞ւ է Ատրպէյճանի դիրքորոշումը կոշտ, որովհետեւ կարծում է, որ ժամանակը աշխատում է իր օգտին. նախ, դեմոգրաֆիկ աճը (համեմատած Հայաստանի հետ), տնտեսութեան աճը թոյլ է տալիս իրեն ենթադրելու, որ ինքը այնքան կը հզօրանայ, որ Ղարաբաղի հարցը նորից կը փորձի լուծել ռազմական ճանապարհով, եթէ չզիջենք: Քանի դեռ Ատրպէյճանն այդ մտքին է, Ղարաբաղի հարցի լուծում ես չեմ տեսնում, անկեղծ ասած:

-Այս օրերին արժէ յիշեցնել Հայաստանի ապագայի համար Ղարաբաղի խնդրի կարեւորութիւնը:

-Նախ կը տրուենք ազգայինից, եւ գանք միջազգային ստանդարտներին: ԽՍՀՄ ձեւաւորման ժամանակ արհեստական սահմաններ են գծուել: Բնական է, որ ԽՍՀՄ փլուզումից յետոյ, ձգտելով անկախութեան, ազգերի ինքնու-

րոշմանը, առաջին հարցը բարձրացրեց Ղարաբաղի ժողովուրդը, որը ԽՍՀՄ Սահմանադրութեան միջոցով էր փորձում լուծել: ԽՍՀՄ օրօք արդեն Ղարաբաղը դե ֆակտո դարձել էր անկախ Ատրպէյճանից: Երբ ԽՍՀՄ-ը փլուզուեց, Ատրպէյճանը փորձեց պատերազմով լուծել Ղարաբաղի հարցը, չարաչար սխալուեց, եւ սկսուեցին բանակցութիւններ: Այստեղ կան միջազգային իրաւունքի եւ արդարութեան ու պարտութեան տարբեր հարցեր: Մեր ժողովուրդը մեծ կորուստներ է ունեցել. ոչ միայն զոհեր ենք ունեցել, այլ նաեւ մեր ամբողջ տնտեսութիւնը, կենցաղը տրամադրուած է եղել այդ հարցի լուծմանը: Եւ ես կարծում եմ, որ նա ժողովրդի ապագայի համար Ղարաբաղը շատ կարեւոր բանալի է: Կորցնել Ղարաբաղը՝ նշանակում է բացի տարածքից, բացի մարդկանց անկախութիւնից, ազատութիւնից՝ հոգեբանօրէն կորտրուել մինչեւ վերջ: Այդ ֆունդամենտալ խնդրի լուծումը շատ կարեւոր է:

-Ձեր գնահատմամբ, Հայաստանի իշխանութիւնն ամէն ինչ արե՞լ է բանակցութիւններին մաքսիմալ շահեկան խաղաքարտերով ներկայացնում:

-Ամէն ինչ անելը տարբեր հասկացութիւններ է ներառում: Դիւանագիտական հարց կայ, քաղաքական, պատմական հարցեր կան: Խօսքը բանակցութիւնների կառուցուածքի մասին է. Հայաստանն է բանակցում, թէ՞ Ղարաբաղը: Ես կողմնակից էի, որ Ղարաբաղը մասնակցի այդ բանակցութիւններին:

Հիմնական կորուստը, որ մենք ունենում ենք այս տարիներին, այն

է, որ Ատրպէյճանն անընդհատ յոյս ունի, որ մեզանից հզօրանում է: Մեր պետութիւնը նոյն այս պոտենցիալով, նոյն այս մարդկային ուժով կարող էր մի քանի անգամ աւելի հզօր պետութիւն դառնար: Այդ դէպքում Ատրպէյճանը ուզերէր՝ կը նստեր սեղանի մօտ:

-Այսինքն Ղարաբաղի խնդրի շուրջ բանակցութիւններում Հայաստանի յաջողութիւնները նախ եւ առաջ պայմանաւորուած են ներքին խնդիրների լուծմամբ:

-Այո, բայց Հայաստանի ներքին զարգացման համար պէտք է լինի իրաւական երկիր, մարդու իրաւունքները պէտք է պաշտպանուեն, գործարարները պէտք է իմանան, որ իրենք ինքնուրոյն մարդիկ են եւ ենթարկուած են միայն օրէնքներին, եւ ոչ թէ տարբեր իշխանաւորների կամայականութեանը: Մեր երկիրն ունի պոտենցիալ, բայց մի շատ զարմանալի բան կայ. լուսանջելներ, եւրոպաներ գնացող մեր նոր սերունդը շատ արագութեամբ շատ մեծ յաջողութիւնների է հասնում: Առաջ գնալու հայկական ֆենոմենալ յատկութիւն կայ, որը շատ թոյլ է արտայայտուած մեր Հայաստանում, եւ դա խիտ է մեր Հայաստանի շահերին: Եթէ մենք կարողանանք դառնալ նորմալ պետութիւն, եւ դրսում մեծ յաջողութիւնների հասած հայերը, իմանալով, որ սա իրենց հայրենիքն է, որտեղ կարող են ոչ միայն փող նուիրել, որ ճանապարհ կառուցեն, այլ աւելի լուրջ գործերով զբաղուեն՝ գործ դնեն, այդ դէպքում Հայաստանը շատ առաջ կը գնայ: Իսկ ինչքան Հայաստանը առաջ գնա, Ատրպէյճանն այնքան պատերազմով տարածքներ վերցնելու ախորժակ չի ունենայ:

-Հայաստանի եւ Ղարաբաղի իշխանութիւնների լեգիտիմութեան խնդիրները որքանով կարող են վնասակար լինել Ղարաբաղեան խնդրի կարգաւորմանը:

-Լեգիտիմութեան երկու հարց կայ: Նախ եւ առաջ՝ դու ի՞նչ ես: Երկրորդը՝ քո մասին ինչ են մտածում: Եթէ նոյնիսկ խաբեն կամ քեզ մօտ ձեւ անեն, թէ քեզ մօտ ամէն ինչ լեգիտիմ է, արդար է, դա վատ չէ, բայց չի նպաստում երկրի ներքին պոտենցիալի զարգացմանը: Ինձ համար աւելի կարեւոր է՝ մենք ինչ ենք, եւ ոչ թէ՛ մեր մասին ինչ են մտածում: Բայց ես տեսնում եմ, որ եթէ դու նորմալ

պետութիւն ես, քո մասին չեն կարող վատ մտածել: Դրա համար ես մտածում եմ՝ ոչ թէ մենք ինչ ենք, այլ՝ ինչպիսին ենք: Մենք ժողովրդավարութիւն ուզում ենք ոչ թէ նրա համար, որ դրսին ցոյց տանք, ասենք՝ նայէք, ժողովրդավար ենք: Մենք օրինականութիւն, արդարութիւն ենք ուզում մեր երկրի համար, որը Հայաստանում դեռ չկայ:

-Վերջին 10 տարուայ ընթացքում Ղարաբաղում չգրանցուած եւ մշտապէս չբնակուած Բակո Սահակեանի նախագահ դառնալու հեռանկարին ինչպի՞ս էք վերաբերում:

-Նախ եւ առաջ այդ մտդան մտաւ 1998 թուին, երբ Ռոբերդ Քոչարեանը 10 տարուայ քաղաքացի էլ էր, բայց գրանցուեց որպէս 10 տարուայ քաղաքացի: Այդտեղ դեռ ինչ-որ բան կար, թէ՛ չէ՞ որ մենք յայտարարում ենք, որ Ղարաբաղը Հայաստանի մի մասն էր ըստ ԳՆ որոշման, բայց այդ որոշումը չի վաւերացուել:

Հասկանալի է: Բայց գոնէ հեռուոր ինչ-որ բան կար, որի կապակցությամբ ազգային տեսակետից շատերը մեծ աղմուկ չհանեցին: Բակո Սահակեանի դէպքում ինքը փաստօրէն դրսի քաղաքացի է: Բացի այդ, անվտանգութեան ծառայութեան (դրսի աշխարհի համար դա ԿԳԲ է) շէֆը, երբ դառնում է ղեկավար, դա պետութեան համար շատ բացասական իմիջ է տալիս ամբողջ աշխարհում: Ղարաբաղում ես ինքս ճանաչում եմ շատ պարկեշտ, շատ ազնիւ, հայրենասէր, մաքուր մարդկանց, ընդ որում ոչ թէ միայն գիւղացիների, այլ նաեւ նոմենկլատուրայի մէջ: Կան նորմալ մարդիկ: Ինչո՞ւ էր պէտք անպայման իրեն նշանակելը: Չնայած հասկանում եմ. նա կ'ենթարկուի Սերժ Սարգսեանին, Հայաստանի իշխանութեանը. ինչ որ ասեն՝ կ'անի: Բայց դա՞ է կարեւորը:

-Բակո Սահակեանի՝ ԼՂԻ նախագահի պաշտօնավարումը անգաւոր է ավտորիտար ռեժիմի հաստատման իմաստով:

-Ընդհանրապէս ԿԳԲ ներկայացուցիչները որպէս զաղափարախօս, զաղափարաբան՝ միշտ բացասական հետեւանքներ են ունենում:

-Օրերս, երբ ԼՂԻ նախագահ Արկար Ղուկասեանը յայտարարեց, թէ Ղարաբաղի ժողովուրդը գիտի ինչ

Շար.ը էջ 18

**ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

Now Available RightPlan PPO 40

Featuring PlanScape® Keeping Californians Covered...

**The Power of Blue** SM

Health coverage for every household member and every household budget.

**Affordable plans for the whole family.**

Blue Cross of California and BC Life & Health Insurance Company are independent licensees of the Blue Cross Association. The Blue Cross name and symbol are registered service marks of the Blue Cross Association.

**ԱՆՌԱԺԵՇ Է**

1975-2005

**30th ANNIVERSARY**

A.B.A. INSURANCE SERVICES

**BEDROS SIAMANTO MARONIAN**

818-500-9585 805 East Broadway, Glendale, CA 91205

ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

AUTHORIZED AGENT FOR BLUE CROSS OF CALIFORNIA LIC. # 0494056

Blue Cross of California

# ՆՉԱԿԵԱՆ 20-ԿԱՆԱՂԱՆՆԵՐ

## ԻՆՉՈ՞Ւ ԶՈՐՈՒԵՑԱՆ ՔՍԱՆՆԵՐԸ

### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

#### ՆԱԽԱԲԱՆ

Քսաններու ճակատագրին եւ անոր տուն տուող պատճառները հասկնալու համար, պարտաւորուած ենք յետադարձ ակնարկ մը նետել 19րդ դարու վերջին քառորդին վրայ, երբ ծնունդ կ'առնէր հայ քաղաքական, համահայկական առաջին կուսակցութիւնը, Ս.Գ. Հնչակեան կուսակցութիւնը, իր իւրայատուկ աշխարհայեացքով եւ հայ ժողովուրդի ազատագրութեան անհրաժեշտ յստակ մարտավարութեամբ:

Ի՞նչ վիճակ ունէր հայը այդ օրերուն:

ա. Հայը կազմակերպուած ազգ մըն էր որ կորսնցուցած էր իր ազատութիւնը:

բ. Հայը սկսած էր ազատագրական պայքար մղելու, թրքական դաժան լուծէն ինքզինք թօթափելու համար:

գ. Ս.Գ.Հ.Կ.ը լաւ հասկցած էր որ իթթիհատ կուսակցութիւնը կը հետապնդէր համաթուրանական գաղափարախօսութիւն մը, որուն հիմնական նպատակն էր հայ ժողովուրդին բնաջնջումը:

Այս տուեալներու լոյսին տակ, անվարան կարելի է պնդել որ յեղափոխական գործունէութիւնը, խորքին մէջ, պատմական եւ ընկերային անխուսափելի պահանջ դարձած էր, եւ ոչ թէ պարագայական ուղեգիծ մը: Հայ ազգը, իբրեւ երկհազարամեայ պատմութիւն եւ մշակույթ ունեցող ժողովուրդ, կը հիւծէր օսմանեան բռնակալութեան ներքեւ: Հալածանքները, հարստահարութիւնները, եւ ամէն տեսակի նուաստացումները կը պարտաւորեցնէին հայ ժողովուրդի զարգացած եւ գիտակից երիտասարդութիւնը որդեգրելու ընթացք մը, որ նշանաբան ունեցաւ «Մահ կամ Ազատութիւն» արտայայտութիւնը: Թրքական լուծէն ազատագրուելը ազգային հրամայական մը դարձած էր, ինչ որ ալ ըլլային անոր համար թափուած զոհողութիւնը եւ վճարուելիք գինը: Մէկ խօսքով, յեղափոխութիւնը ունէր հայ ժողովուրդին համար, պատմաքաղաքական եւ ընկերային, հոգեբանական արդարացում:

#### 1908-1913-Ի ՇՐՋԱՆ

«Ժէօն թիւրքերու», այլ խօսքով իթթիհատականներու սահմանադրութեան մինչեւ Ս.Գ.Կ.ի Քէօսթենճէյի մէջ գումարած 7րդ համագումարը, այդ կարճ հինգ տարիները ծանր պիտի կշռէին հայութեան ճակատագրին վրայ: Լուսամիտ ղեկավար, Փարամազի խօսքերը շատ յստակ են:

«Եթէ բոլոր հոսանքները քննան, հնչակեանութիւնը չի կրնար ուշադիր չհետեւիլ անոնց քայլերուն, եւ ի պահանջել հարկին չպայքարիլ հայութեան եւ թուրքիոյ այլազգի աշխատաւորութեան շահերուն համար»:

Սոյն վերապահութիւնը պիտի արդարանար 1909ի Ատանայի ջարդով, 1911ի իթթիհատի Սելանիկի մէջ առած որոշումներով, որոնք կը վերաբերէին հայ եւ այլ փոքրամասնութեանց ճակատագրին, եւ նաեւ Ս.Գ.Հ.Կ.-իթթիլաֆ ընդդիմադիր կուսակցութեան գործակցութեամբ: Այս բոլորը պիտի յանգէին 1913 թուականի 7րդ համագումարին, Ռումանիոյ Քէօսթենճէ քաղաքին մէջ, եւ հոն առնուած որոշումներուն, եւ մասնութեան

մը պատճառաւ, ոչ միայն 20ներու կախաղան բարձրացման, այլ նաեւ հայ ժողովուրդի ցեղասպանութեան:

#### ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՉՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Այդ խառնակ եւ անապահով օրերուն, Ս.Գ.Հ.Կ.ը որդեգրեց իրատես, յստակատես քաղաքականութիւն մը, իթթիհատէն ոչ միայն չխաբուելու, այլ գործակցելու ընդդիմադիր «Իթթիլաֆ» կուսակցութեան հետ, պայքարելու համար անգիջող իթթիհատի դէմ: Այս իրատեսութիւնը, այդ օրերէն մինչեւ ներկայ ժամանակները, տիրող գիծը կը հանդիսանայ Ս.Գ.Հ.Կ.ի ազգային-քաղաքական ուղեգիծին:

բ. Ս.Գ.Հ.Կ.ը կողմէն էր բոլոր փոքրամասնութեանց հետ գործակցութեան, իթթիհատի դէմ իր պայքարի գծով: Այս կը նշանակէր պայքար թէ ներքին եւ թէ արտաքին մարզերէն ներս, հայ դատի թղթածրարի էութեան եւ բացատրութեան միջազգային գեանի վրայ: Յստակ այս ուղեգիծը կը մնայ իր գորու մինչեւ այսօր, երբ մեր առջեւ դրուած է մեր սրբազան դատի հետապնդման համար անհրաժեշտ միասնականութիւնը հայ քաղաքական մտքի ղեկավար շրջանակներէն ներս:

գ. 20ներու մարտիրոսացման յարուցած սկզբունքները անքակտելիօրէն դրոշմուած են հայ ժողովուրդի հաւաքական գիտակցութեան մէջ եւ կը մնան առյաւէտ: Ահաւասիկ այդ սկզբունքները, որոնք յստակօրէն կը դրսեւոր-

### ՔԱՆ ԱՆՄԱՆՆԵՐՈՒ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՊԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԿ ԿԱՌԱՓՆԱՏԻ ԱՌՁԵՒ

Մեզ քսաններս կը կախէք, բայց 20.000ներ պիտի հետեւին մեզի: ՏՈՔԹ. ՊԵՆԵՏ

Տէր Հայր, տուր այս չոր թաշկինակն իմ մօրս, ըստ անոր, որ անիկա երբեք թրջուած չէ արցունքով:

ԵՐ. ԹՕՓՈՒԶԵԱՆ

Իմ հաստատ կարծիքով, մարդուն միակ եւ լաւագոյն ուղին պայքարի ուղին է: Պայքարիլ՝ տառապող աշխատաւորութեան յաղթանակին համար: Գործել յանուն մարդկային երջանկութեան: Մէկ խօսքով՝ պայքարիլ որ մարդը ապրի ամենազարգացած միջոցներով: Այս է կեանքի վերջնական նպատակը:

ՎԱՆԻԿ

Հայ մեռնում է կաթիլ կաթիլ: Որպէսզի հայ կաթիլ կաթիլ չմեռնի, հայը մի անգամ էլ պիտի մեռնի՝ որ հայը ապրի:

\*\*\*\*

Մեր Գողգոթաները Նագովրեցիի Գողգոթայէն աւելի վսեմ են: Մեր խաչը Օծեալի խաչէն աւելի ծանրագոյնն է, մեր յաղթանակները՝ գերագոյնը պիտի ըլլան յաղթանակներուն:

\*\*\*\*

Հոն ուր կախաղաններն են ճօճում, Ազատութիւնն է ման գալիս, հոն ուր մեռելներն են ննջում՝ Յարութիւնն է մօտալուտ:

\*\*\*\*

Դուք մեր մարմինը միայն կրնաք կախել, իսկ մեր գաղափարը՝ ոչ:

\*\*\*\*

Դուք վաղը պիտի տեսնէք Արեւելքի հորիզոնին վրայ Սոցիալիստական Հայաստանը:

ՓՈՐԱՍԱԶ

ուին կախաղանի վրայ իրենց արտայայտած խօսքերէն.

- Հայ ժողովուրդի յաւերժութեան գաղափարը -

«Մեզ քսաններս կը կախէք, բայց քսան հազարներ պիտի հետեւին մեզի»:

- Ազատութեան գաղափարը «Հոն ուր կախաղաններ են


ճօճում, ազատութիւնն է ման գալիս»:

- Պայքարի գաղափարը -

«Դուք մեր մարմինը միայն կրնաք կախել, իսկ մեր գաղափարը՝ ոչ»:

- Հայրենիքի տեսլականը

Շաք.ք էջ 17



# Happy Fathers Day

## Հայրերու Օրուայ Ճաշկերոյթ

Կազմակերպութեամբ՝  
«Մ.Մ.-ի Տիկնաց Օժանդակ Մարմնի

Յունիս 17, 2007

Կէսօրէ ետք ժամը 1:00-էն սկսեալ



162 N. SIERRA MADRE BLVD.  
PASADENA, CA 91107

Մուտքի նուէր \$30

Տոմսերու համար հեռաձայնեցէք  
(626) 793-6220, (626) 354-5924

ՇՆՉԱԿԵԱՆ 20-ԿԱՍԱԴԱՆՆԵՐ

1915 ՅՈՒՆԻՍ 15

Քսաններու նահատակութենէն անցած են 92 տարիներ: Ինչպէ՞ս կ'ոգեկոչուէր անոնց յիշատակը նահատակութեան յաջորդող տարիներուն: Առ ի հետաքրքրութիւն, կը ներկայացնենք Սարգիս Տիրուհիի մէկ խմբագրականը, հրատարակուած Հայկախի »Սուրիական Մամուլ« քերթով, 15 Յունիս 1924ին:

«ՍՈՒՐԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ» ԽՄԲԱԳՐԱԿԱՆ 15 Յունիս, 1924

Ինը տարի առաջ 1915 Յունիս 15ի լուսաբացին, Պոլսոյ Սուլթան Պայազիտի հրապարակը, Միացեալ Անկախ Հայաստանի ուխտին, թրքական սուլիաներու տակ կախաղան առաջնորդուեցան Հնչակեան քսան տիտաններ:

Հայկական ազատագրութեան համար թրքական կարգերու դէմ շարունակուող անհաւասար մենամարտի գոհեր՝ որոնք յախուռն քայլ մ'առած էին Քէօսթէնճէէն մինչեւ Պոլիս, յեղաշրջելու իթթիհատական թիրանին, որ թուրքիոյ փոքրամասնութեանց ի մասնաւորի հայերու արիւնը սկսած էր կաթիլ կաթիլ սպառել, իբրեւ հաւատարիմ յաջորդը իր նախկին համիրական ըէթիմին, որուն կիրարկած ջարդերն ու կոտորածները, Պալքաններէն սկսեալ մինչեւ Մշոյ ու Տալուրիկի, Վանի, Չէլթուրի, եւ այլն հայաշատ կեդրոններու մէջ իր աւերը գործած էր: Թրքական բարբարոսութիւնը իր գործունէութեան դաշտը, շուտով փոխադրեց Պոլսէն Փոքր Ասիա եւ Արեւելեան Նահանգներ, ու այսպէս կեսարիոյ, Մարաշի, Վանի, Ատանայի եւ այլն նահանգներու մէջ մինչ մէկ կողմէ կախաղանները կը ճօճէին, միւս կողմէ Հայկական հսկայ գանգուածներ անպաշտպան մնացած ոչխարի հօտերու նման կը քշուէին նահանգէ նահանգ, քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ, վերջապէս մինչեւ անմարդաբնակ անապատներ ուր կը սպասէր անոնց եղեռական եւ տմարդային կազմակերպուած ջարդարարութիւն մը:

Թուրքիան ծայրէ ի ծայր կախաղանի ու ջարդի երկիր. ահա այս էր օրուան վարիչներու ընդգրկած նշանաբանը: Եւ այս բարբարոսութեան հեղինակները ի տես այս ամէնուն կը հրճուէին, հաւատալով որ կրցած են թուրքիայէն բնաջնջել այն տարրը որ իր կենսունակութեամբ պիտի կրնար մօտ ապագային հիւանդ մարդուն ժառանգորդը դառնալ: Բայց քսաններու վերջին պատգամը այդպէս չէր եղած. անոնց

մին գողգոթայի բարձունքէն մարգարէացած էր. «Մենք քսաններս կ'երթանք բայց մեզի պիտի յաջորդեն քսան հազարներ ու այդ քսան հազարներու գոհճը, քսաններու գաղափարի յաղթական դափնին պիտի խլէին իբրեւ անձնուրաց ու հաւատարիմ յաջորդները իրենց գաղափարի անգուգական ընկերներուն: Իսկ Փարամազ իր նուիրումի ու գոհաբերութեան այս վերջին ձեռնարկը մկրտած էր սա նշանաբանով. «Հայը փոխանակ կաթիլ կաթիլ մեռնելու հայը մի անգամ էլ պիտի մեռնի, որպէսզի հայը միշտ ապրի»: Այս պատգամները անարձագանգ չմնացին. եթէ իթթիհատը իր ընդգրկած սկզբունքը կատարելապէս իրականացնելու համար անպաշտպան հազարաւոր հայ մանուկներ ու կիներ որոշ ճարակ կը դարձնէր, անդին քսաններու արձակած պատգամը, հեռաւոր երկիրներէ, դէպի Կովկասի սահմանագլուխը կը փութացնէր քսան հազարներ, որոնց ամէնուն նշանաբանն էր թէ «հայը մի անգամ էլ պիտի մեռնի որպէսզի հայը միշտ ապրի»:

Իթթիհատի գազանային վայրագութիւնները անգոր եղան կասեցնելու հայ ազգին մէջ ծնունդ առած յեղափոխական շարժումները, անոնք յեղափոխական լաւագոյն ոյժերը հնձեցին բայց նահատակուող գաղափարականներու գործը անժառանգ չմնաց:

Անցան արիւնի տարիները, հայութիւնը կախաղաններու եւ ջարդերու մահասփիւռ աշխարհէ մը քալեց ու այդպէս հալածական ու անճիտուած դուրս եկաւ թուրքիայէն ու մի անգամ ընդ միշտ բաժնեց իր ճակատագիրը թրքական բարբարոս կայսրութենէն, որուն արքայական անարգ սուրբ հայ արիւնին մէջ ժանգոտած ու բթացած էր:

Քսաններու յաջորդող քսան հազարներ «հայը մի անգամ էլ պիտի մեռնի որ հայը ապրի» ի ուխտով կերտեցին ու դարբնեցին քսաններու նպատակը ու Արարատի ստորոտը ծնաւ այն երկիրը որուն անմոռանալի եւ անփոխա-

Շար.ք էջ 17

ՀՆՉԱԿԵԱՆ ԳՐԱԿԱՆ ԻՐԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔԸ

Գնահատելու համար Հնչակեան գրական իրապաշտութեան արժէքը, պէտք է աչքի առջեւ ունենալ մինչեւ այդ՝ հրապարակը գրաւող ռոմանթիկ գրականութեան սանձարձակ տիրապետութիւնը:

Ռոմանթիկ մի իշխաններն էին Գրիգոր Օտեան, Մկրտիչ Պէշիկ-թաշլեան, Պետրոս Դուրեան, Նիկողայոս Ռուսինեան, Նարայէյ, Թ. Թերզեան, մանաւանդ Ղեւոնդ Ալիշան եւ թարգմանիչներու փաղանգը:

Անոնք թէեւ ընթերցողի երեւակայութիւնը կը գրգռէին, անցելապաշտ հայրենասիրական բուռն պափոսով եւ կ'ոգեկոչէին կրօնական ու քաղաքական պայքարներու հերոսները՝ յանուն հայրենական գահի եւ քրիստոնէութեան, սակայն անոնց աչքերը Պառնասէն վար չէին իջներ եւ հայ գեղջուկին ու արհեստաւորներու ցաւն ու տանջանքը չէին իւրացներ:

Բացի այդ՝ ռոմանթիկները իրենց ներշնչումները կ'առնէին եւրոպական, մանաւանդ ֆրանսական վայելչասէր դասակարգէն, որ ոչ մէկ նմանութիւն ունէր գաւառացի հայրու տառապակած կեանքին հետ:

Մանսուրեան երկար որոնումներ է ցետոյ, նուիրուելով տարբեր արդի երաժշտական լեզուի արտայայտչամիջոցներու իւրացմանը, յանգեցաւ ազգային երաժշտութեան: Խորանալով միջնադարեան հայ երաժշտութեան գեղեցկութեան մէջ, գնահատեց եւ իւրացուց այն ժամանակակից միտքով եւ հոգեբանութեամբ:

Կասկած չկայ որ հայ երաժշտութեան այսօրուայ մակարդակը արժանի է, որ անոր ուղիները, խորիմաստութիւնը աւելի խորունկ նուրբ եւ հետաքրքրական բացատրուին ընթերցողին: Որքան ջերմ, հասկնալի ու հմտօրէն այդ մասին բացատրուի, այնքան շատ հետաքրքրողներ եւ պատրաստուած կ'ըլլան ունկնդիրները:

«Արուեստ Քերթութեան» (Ars Poetica) խորագրուած ստեղծագործութիւնը, Մանսուրեանի վերջին 10 տարիներուն ամենէն ցայտուն համաշխարհային արժէք ունեցող երկերէն է, գրուած 1996-2001 թուականներուն նուիրուած իր կնոջ՝ Նոնա Ահարոնեանին: Չորս մասերով փիլիսոփայական խորը բովանդակութեամբ, ճիւղաւորուած բարդ մտքերով, ողբերգականութեամբ ներկայացուած են տարիներու Զարենցի բանաստեղծութեան արուեստի եւ իրական կեանքի

## ՀԱՅ ԵՐՈՒՄԱՂԵՍԻ ՕՐ

Երեքշաբթի, Յունիս 19, 2007ին, Հայաստանեայց Եկեղեցւոյ Առաջնորդարանի «Գալայճեան» սրահին մէջ, (Պըրպէնք), տեղի պիտի ունենայ «Հայ Երուսաղէմի Օր» անուան տակ՝ ճոխ ու բացառիկ յայտագիր մը: Ձեռնարկի գլխաւոր նպատակն է Հայ Երուսաղէմը՝ Հայ ժողովուրդի իրաւունքներն ու առանձնաշնորհումները ծանօթացնել Լոս Անճելոսահայ համայնքին՝ քաջալերելով ուխտագնացութիւնը Երուսաղէմ: Ձեռնարկը կը հովանաւորէ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Ձեռնարկը կազմակերպուած է Երուսաղէմի Ս. Թարգմանչաց Վարժարանի Սանուց Միութեան կողմէ, մասնակցութեամբ՝ Երուսաղէմի Պատրիարքութեան Բարեկամներու եւ Կիւլպէնկեան Մատենադարանի Բարեկամներուն:

Ձեռնարկի առաջին բաժնի հանդիսավարն է գաղութիս սիրուած ու ծանօթ ազգայիններէն՝ Բարսեղ Գարթալեանը, իսկ օրուան գլխաւոր բանախօսն է Փրոֆ. Օշին Քէշիշեան: Կիւլպէնկեան Մատենա-

դարանի մասին պիտի գեկուցէ Սիլվա Նաթալի Մանուկեան:

Յայտագրի Բ. մասի հանդիսավարն է «Կարկաչ» հեռուստաժամի հաղորդավար՝ արուեստագիտուհի, Սեդա Հայրիկեանը: Երեկոն պիտի խանդավառեն արուեստագէտներ՝ Սալբի Մայիլեան, Անահիտ Ներսիսեան, Գագիկ Պատալեան, Լիլիթ Խոջայեան, Միլէն Հայրիեան, Daniel Dekker (Նիւ Եորքէն), Ալին Մէլիք Ատամեան, Դաւիթ Սամուէլեան, Մէրի Աւետիսեան:

Սոյն ձեռնարկին ներկայ պիտի ըլլայ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Լուսարարապետ Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեանը: Այս առթիւ պիտի ցուցադրուին ու վաճառուին Տէրունական Սրբավայրերու նկարներ եւ գիրքեր:

Յայտագրէն ետք տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն, Առաջնորդարանի Տիկնանց Միութեան կողմէ: Մուտքը ազատ է: Միրով հրաւիրուած է հայ հասարակութիւնը այս ճոխ ու բացառիկ յայտագիրը վայելելու, ծանօթանալով Հայ Երուսաղէմին:

փոխյարաբերութեան հարցերը:

Տարբեր տարիներուն գրուած են Զարենցի քերթուածները, երեք մասերու մէջ իմբաւորած է Մանսուրեանը երեք ենթախորագրերով. «Գիշերային երեք երգ», «Կանացի երեք դիմանկար», «Աշնան երեք երգ» եւ վերջինը՝ «Եւ կ'իջնի լուսթիւն»:

Առաջին մասի 3 խմբերգները թէեւ տարբեր են իրենց բնոյթով, բայց իւրաքանչիւրին մէջ ահնարեւ է միեւնոյն հոգեվիճակի տարբեր

նրբերանգներ:

50ի մօտ երկսեռ երգչախումբը ղեկավարութեամբ Վաչէ Պարտուլմեանի, բարձր մակարդակով ակաբելլա երգեցին կատարելալ հասկացողութեամբ եւ մեկնաբանութեամբ հիացուցին իրենց վճիտ միաձոյլ արտայայտութեամբ եւ բանաստեղծական նրբութեամբ: Կանացի ձայնը սքանչելի միաձոյլ հնչեց, եթերային թրթիւով:

Շաք.բ էջ 18



**WWW.GILGIACOLLEGE.COM**  
**(818) 956 9600**  
**CAMPUS**  
 2361 FLORENCITA DRIVE MONTROSE, CA 91020  
**OFFICE**  
 1650 FLOWER STREET, GLENDALE, CA 91201

<p><u>Managerial Courses</u></p> <ul style="list-style-type: none"> <li>1- Office Administrator</li> <li>2- Computerized Accounting</li> <li>3- Administrative Assistant</li> <li>4- ESL</li> <li>5- Computerized Taxing</li> <li>6- Medical Billing</li> </ul>	<p><u>Design Courses</u></p> <ul style="list-style-type: none"> <li>7- Web-Site Design</li> <li>8- Video &amp; DVD Editing</li> <li>9- 3-D Modeling</li> <li>10- 3-D Animation</li> <li>11- Graphic Design</li> <li>12- Photo Editing</li> <li>13- AutoCAD</li> </ul>	<p><u>Technical Courses</u></p> <ul style="list-style-type: none"> <li>14- PC Systems Technician</li> <li>15- Network Administrator</li> <li>16- Desktop Publishing</li> <li>17- Visual Basic programmer</li> </ul>
---	---	---

**Our Dedication Is**

**To educate key job skills for a better workforce performance.**

**To give you access to the opportunities and tools of the modern employment markets.**

**To support the workforce development with a sustainable education.**

**To improve your job performance by developing your skills.**

**We offer efficient course clusters for an intensive and competent training.**

**We Provide State Funded Program For Employers and Employees (ETP)**

**We Accept Workers Compensation Training Vouchers**


ԳՐԱԿԱՆ

ՍՏԱՑՈՒԱԾ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՐ

ՎԱՏՐԻԾ ԾԵՐԵՃԵԱՆ

Կեանքին եւ Ստածողութեան Ընդմէջէն Պէյրութ-2007

Լիբանանայ ծանօթ մտաւորականներ Պէյրութի մտանքները եւ ժիրալը Դանիէլեանի խմբագրութեամբ լոյս ընծայուած է Լիբանանայ գրող, հրատարակագիր եւ ազգային քաղաքական ծանօթ ղէմքերէն Վահրիւծ ճէրէճեանի կեանքին եւ մտածողութեան նուիրուած ներկայ պատկառելի հրատարակութիւնը: Ան կը բաղկանայ 485 էջերէ ու լոյս է տեսած Շիրակ տպարանէն, Պէյրութ:



Վահրիւծ ճէրէճեան Կեանքին եւ Ստածողութեան Ընդմէջէն

Գիրքը գնահատելի, այլ շնորհակալ նախաձեռնութիւնն է մեր մշակութային ու գեղարուեստական կեանքին նուիրուած, եւ «Վահրիւծ եւ Վերժին ճէրէճեան» թատերական մրցանքին» հիմնադիր այլին՝ Վերժին ճէրէճեանի, որուն խօսքին կը յաջորդեն գրքին խմբագրական մարմինը՝ յառաջաբանը, Ս.Դ.Զ. Կուսակցութեան խօսքը, ինչպէս նաեւ բանաստեղծ Պէյրութի մտանքները «Վահրիւծ ճէրէճեանին» եւ «Ձարթօնք» թերթի խմբագիր Պարոյր Աղպաշեանի «Վերժին ճէրէճեանը» անդրադարձներով:

«Կենսագրական Յուշապատում» վերտարութեամբ յուշագրութեան մէջ, առաջին մասով, Վահրիւծ ճէրէճեան կը նկարագրէ Պէյրութի 1923-1933-թ.ի հիւղակաւանէն (բոլորիս ծանօթ «Քէմբը»), մինչեւ Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան Տաղանայր, եւ Վագգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ իր ունեցած շահեկան հանդիպումները: «Լիբանանի հետ» երկրորդ մասին մէջ կը ծանրանայ Լիբանանի քաղաքացիական պատերազմի, դրական չէզոքութեան քաղաքականութեան, տնտեսական տագնապի, նախագահական ընտրութեան եւ այլ շահաւէտ նիւթերու մասին: Երրորդ, չորրորդ գլխերուն մէջ, ղէմ յանդիման կը գտնուինք Հայկական Հարցի, Փանթուրանիզմի, Քրտական ազատագրական պայքարի, Պաղեստինեան, Իսրայէլեան, նաեւ՝ հայրենական աւօրեայի հետ (Հայաստան՝ ճակատագրական խաչմերուկի առջեւ, Հայաստան Սփիւռք, Հայաստան Հիմնադրամ) առնչուած հիմնահարցերու հետ:

Գիրքը իր ամբողջութիւնը կը գտնէ իր մնացեալ հինգերորդ, վեցերորդ, եօթերորդ եւ ութերորդ գլուխներու խմբագրութեամբ, ուր տեղ գտած են Վահրիւծ ճէրէճեանի հրատարակուած, հրատարակագրական էջերը, ինչպէս նաեւ՝ իր հարցազրոյցները եւ իր մասին տրուած Պէյրութի մտանքներ, Ժիրալը Դանիէլեանի, Թորոս Թորանեանի, Արամ Սեփեթեանի եւ Սուրէն Դանիէլեանի վկայութիւնները:

Տարակույս չկայ՝ ներկայ հրատարակութիւնը «Կենդանի վկայութիւն մըն է Լիբանանի հայութեան համար գործած գործիչի մը, ղեկավար ղէմքի մը ազգանուէր կեանքին եւ մտաւոր ճիւղին» ինչպէս պիտի ըսէր խմբագրութիւնը իր յառաջաբանին մէջ:

«ԱՅՍ ՏՈՒՆԸ ՔՈՒԿԴ Է ԹԵ ԻՍՍ»

Զաւէն Խանճեան Լու Անճելու-2007

Գաղութիս ազգային հասարակական կեանքին մէջ իբրեւ կրթական, եկեղեցական եւ կազմակերպական բնագաւառներէ ներս իր շօշափելի, գործնական ներդրումը մուծելուն գուգահեռ, Զաւէն Խանճեան հրատարակ կու գայ իր առաջնեկ գիրքով, ուր նոյնպէս կը հետապնդէ ազգապահպանման եւ պահանջատիրական նպատակներ: Հեղինակը իր գիրքը կը ձօնէ իր թողնելուն՝ «մաղթելով, որ հայրենի հողի անմարելի կարօտին կրակը անմար մնայ անոնց սրտերուն եւ հոգիներուն մէջ»:

Խնամուած բովանդակութեամբ եւ տպագրութեամբ եւ գեղարուեստական լուսանկարներով հարուստ 263 էջերէ բաղկացած «Այս Տունը Քուկդ է Թէ Իմ» Գեղատիպ գիրքը, որուն յառաջաբանին մէջ տաղանդաշատ գրող Ստեփան Ալաճաճեան պիտի այսպէս գնահատէր. «հեղինակը իր ճամբորդութիւնից վերադառնում է անասելի ծանր մտքերով ու զգացումներով: Այս հողի տէրը եղած լինելու զգացումը հզօրանում է այնքան, որ նրա մէջ արթնանում է վաղուայ գալիքը շրջադարձը»:

Խանճեան պարզ ու վճիտ ոճով կը նկարագրէ իր ուխտագնացութիւնը ղէպի Պոլիս ու Կիլիկիա: Սկսած Բերայի վրայ, 1875ին հիմնուած էայտեան վարժարանէն՝ Թաքսիմ, «Մարմարա» օրաթերթի խմբագրատունը: Զէյթունի երակամար երազներէն, Շղուր գետի հին կամուրջը, Մարաշի Ամերիկեան Աղջկանց վարժարանէն եւ այժմ գինուորական կեդրոնի վերածուած Մարաշի Աստուածաբանական դպրոցը: Այնթապի, այժմ մզկիթի վերածուած գեղակերտ Սրբ. Աստուածածին մայր եկեղեցիէն մինչեւ հայկական հին թաղերը: Ու



այսպէս, ուխտագնացի աչքերու առջեւ տակաւ կը յայտնուին Եփրատի ափով կաթողիկոսանիստ Հռոմիւլան, ապա մեր պատմական Եդեսիան՝ Ուրֆան, Տիգրանակերտը մինչեւ Խարբերդ, Մուշ ու Պիթլիս, Վանայ ծով ու բերդը եւ Կարս-Արտասան ու Տրապիզոն:

Զաւէն Խանճեան ունի իր շնորհակալութեան եւ երախտիքի խօսքը, ուղղուած՝ իր կնոջ Սոնային, ուխտագնացութեան ծրագրումին ու յաջող պատկուծին համար: Երուանդ Քոչունեանին, Սարգիս Մաճառեանին՝ խմբագրական աշխատանքներուն, սրբագրութեան ու վերասրբագրութեան համար: Սեդա Խոտանեանին՝ համակարգչային գրաշարութեան եւ հատորի դասաւորման աշխատանքին համար: Մայք Նահապետեանին՝ գրքին գեղարուեստական ձեւաւորումին համար: Ստեփան Ալաճաճեանին՝ հատորը առաջնորդող «Իբրեւ Նախաբան» գրութեան համար:

«ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ - 2»

Յակոբ Վարդիվարեան Նիւ Ըրոզի 2007

Թէքէեան Մշակութային Միութեան ներկայ հրատարակութիւնը Յակոբ Վարդիվարեանի «Հանդիպումներ»-ու երկրորդ հատորն է, որ լոյս տեսած է Նիւ Ճըրզի, 2007-ին: Վարդիվարեան գանիկա կը ձօնէ իր ուսուցիչին, հասարակական գործիչ Գերսամ Ահարոնեանին:



Գիրքը ունի ծանօթ մտաւորական ու գրող Գրիգոր Քէօնջեանի գնահատական յառաջաբանը: Կը գրէ ան. «Հրատարակութիւնը իր ժամանակակից նիւթերով ունի մերօրեայ արժէք ընթերցողին համար, իսկ փաստագրական բնոյթով պիտի պահէ իր շահեկանութիւնը վաղուան ուսումնասիրողին մօտ, որ պիտի հակի անոր վրայ ճանչնալու համար վերջին երեանամեայ մեր պատմութիւնը, մեր հասարակական կեանքը եւ մտահոգութիւնները ուղղակի սկզբնաղբիւրէն-մեր ազգային կեանքի գանազան բնագաւառներու արժանաւոր ներկայացուցիչներու վկայութիւններէն:

438 էջերէ բաղկացող այս հատորը կը բաղկանայ հարցազրոյցներէ, որոնք կատարուած են գանազան բնագաւառներու պատկանող արուեստագէտ, եկեղեցական, գրող, կուսակցական ղէմքերու հետ, որոնց հետ, Յակոբ Վարդիվարեան շօշա-

փած է ազգային, եկեղեցական, մշակութային եւ ընկերային ընդհանրական բնոյթի հարցեր: Այս հատորին մէջ տեղ գրաւած են գրողներ, խմբագիրներ, հոգեւորականներ: Այլազան բնագաւառներէ վերցուած մօտ քառասուն ղէմքեր, որոնց հետ վարդիվարեան կատարած է հարցազրոյցներ, որոնք հետաքրքրութիւն կրնան ստեղծել ընթերցողին մօտ:

New Offices For Lease

IN PASADENA

On Allen Ave. • South of Washington Blvd.

Available spaces are between 250sq.ft. TO 460sq.ft.

ALL UTILITIES ARE INCLUDED

For More Details Call Vartan (626) 255-2537



ՎԱՐՁՈՒ ՄՐԱՎ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՎԱՍԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA

ՇՈՒԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680 (626) 398-0506

ԳՐԱԿԱՆ

ՀԱՆՐԻ ԹՐՈՒԱՅԵԱՅԻ ՄԱՅՐ

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ (ԱՐԱՐԱՏ)

Աշխարհը բազմաշխատ եւ բազմաշնորհ գրող մը կորսնցուց որ հայ էր, ծնած՝ Մոսկուայի մէջ, որ իր ծնողներուն հետ կու գար Եւրոպայի լոյս քաղաքը՝ Փարիզ, 1920 թուականին եւ ամբողջ 87 տարի կ'ապրէր Վիքթոր Հիլկոյի երկրին մէջ, ու քանի իրենց տանը մէջ իր հօր ու մօր լեզուն ռուսերէնն էր, քաջ գիտնալով այդ լզուն կեանք մը ամբողջ ոչ միայն կը կարգար ռուս բոլոր դասականներուն հեղինակութիւնները, այլ խորապէս վերլուծելով Տոսթոևսկիի, Թոլսթոյի, Պուշկինի գործերը, մեծածաւալ մենագրութիւններ կը գրէր անոնց մասին, սակայն միշտ ֆրանսերէնով:

Իր մայրենին՝ հայերէնին անգիտակ, Հանրի Թրուայեա այս ձեւով ունեցաւ երկու մայրենի լեզու՝ ֆրանսերէն ու ռուսերէնը: Առաջինով ստեղծագործեց՝ հտարակելով աւելի քան հարիւր անուն գիրք: Երկրորդով խորապէս քննեց ռուս դասական գրականութիւնը եւ գտաւ, որ այդ գրականութիւնը նոր արիւն եւ աւելի ներարկեց միջազգային գրականութեան:

Շատեր խորհեցան, թէ Հանրի Թրուայեան ինքզինք չաւէտ հեռու պահեց հայութենէն: Այդ «հաստատուած» ամբողջական ճշմարտութեան համապատասխանելի հեռու է:

Երբ Թրուայեայի հայրը մահացաւ, անոր մարմինը բերուեցաւ Փարիզի ժան կուժոնի Հայաստանեայց Ս. Մկրտիչ եկեղեցի, ուր ծխատէր քահանայնա յուզիչ դամբանական մը խօսեցաւ նորոգ հանգուցեալի դագաղին մօտ, արցունք բերելով Թրուայեայի աչքերէն:

Անձամբ ընդունուելով Հանրի Թրուայեայի ապարանքին մէջ՝ Փարիզ, թիւ 5 Պոնափարթ փողոց, 1968 թուականի Յունուարի 30ին, սողերու հեղինակը 2,30 ժամ տեւող խօսակցութիւն մը ունեցաւ հեղինակին հետ, անոր ներկայանալով որպէս հայրենի «Գարուն» ամսագրի աշխատակից՝ ի ձեռին ունենալով համապատասխան փաստաթուղթ:

Այդ օրերուն Հանրի Թրուայեայի բնակարանը բազմասնեակ գրատուն մըն էր: Գիրքերով ծանրաբեռն դարակներով՝ պատերն ի վեր մինչեւ առաստաղ:

Եւ քանի «Գարուն»ի աշխատակիցի փաստաթուղթս գրուած էր երկու լեզուներով՝ հայերէն ու ռուսերէն, մեծ գրողը քարթին մէկ էջին նայելով յարեց՝ այս էջին վրայ գրուածը չհասկցայ, միւսը՝ պարզէ ռուսերէն է, եւ սկսաւ հետս խօսիլ ռուսերէնով:

Իմ կարգիս ըսի ապշեցուցիչ պարզութեամբ զիս ընդունողին՝ այդ էջը ձեր մայրենի լեզուովն է, զոր սորվելու առիթը չէք ունեցած, իսկ ռուսերէնով ես հազիւ թէ կրնամ մի քանի նախադասութիւններ կազմել ու ապա՝ կանգ առնել:

Ուստի մեր խօսակցութիւնը շարունակուեցաւ ֆրանսերէնով:

Նիւթը մեր խօսակցութեան, բազմազան էր, սակայն միշտ գրականութեան մասին:

Բայց նախ քան այդ մասին պատմելու, ըսեմ թէ ինչպէ՞ս կրցայ գտնուիլ Թրուայեայի տանը մէջ:

Մեծ գրողին հետ տեսակցութիւն մը ունենալու ցանկութիւնս, Փարիզ գտնուելով, յայտնեցի Գառգու գեղանկարիչին: Օ, դիւրին է, ըսաւ Գառգու, Հանրի Վէրնէօյը - Աշոտ Մալաքեանը - շատ մօտ կապեր ունի Թրուայեային հետ,



հիմա կը խօսիմ Մալաքեանին, որ ժամադրութիւն մը ապահովէ քեզի համար ահադեմիկոս հայ գրողին հետ:

Մեր ժամադրութիւնը ապահովուեցաւ 1968 թուի Յունուարի 30ին համար, փոքր պատուէրով մը - Մալաքեանը թելադրեց ինծի, որ երբ գրուցի նստիմ Թրուայեային հետ, հարց չտամ իրեն անոր ազգային պատկանելիութեան մասին, քանի որ ըսաւ սինեմայի հայ մեծ բեմադրիչը, - ֆրանսացի գրողի մը համար հարց կու տա՞նք անոր ֆրանսացի ըլլալուն մասին:

Խոստացայ այդ հարցը չտալ: Փոխարէնը ի՞նչ ըրի:

Երբ մեր գրուցը սկսած էր շերմանալ, լուսանկար մը ցոյց տա-

լով հարց տուի մեծ գրողին այսպէս. վարպետ, սիրտս կը վկայէ, թէ այս լուսանկարէն մեզի նայողը ձեր հայրը ըլլալու է:

Այո՛, ըսաւ գրագէտը, հայրս՝ Ասլանը ինծի համար պաշտելի էակ մը էր: Շրջապատս պարպուած գտայ իր մահէն ետք:

Ու ես որ կարգացած էի Թրուայեաններու տաներէց քահանային երկարապատում մէկ յօդուածը Ասլան Թորոսեան-Թարասովի մասին, գլխաւոր գիծերու մէջ ներկայացուցի մեծ գրողին, անշուշտ շեշտելով անոր հայ ըլլալը:

Քիչ ետք պայուսակէս հանելով Բիւզանդ Թոփալեանի հրատարակած «Անդատան» գրական-գեղարուեստական պարբերականին այն թիւը, ուր ֆրանսերէն թարգմանութեամբ տրուած էր «Ես իմ Անոյշ Հայաստանի» սքանչելի քերթուածը, պարզեցի դէպի գրողը եւ բացատրեցի, թէ հայերէն լեզուով լոյս տեսնող այս պարբերականը բարձր գնահատանքի արժանացած գործ է: Թրուայեա կարդաց Չարնցի բանաստեղծութիւնը ու նրբօրէն վերլուծելով քերթուածը բարձրորակ գտաւ նաեւ թարգմանութիւնը:

Հարցումներուս պատասխանելով՝ Թրուայեա իր մասնագէտի կարծիքը յայտնելէ ետք ռուս դասական գրականութեան մասին, ըսաւ նաեւ, թէ թէեւ Շոլոխով եւ Սոլժենիցին կը հետեւին ռուս դասական գրական ուղիին ու իլիա էհրենպուրկը, որ աւելի հմուտ ու

առաջնակարգ լրագրող է, բոլորը իրենց հոգեբանական վերլուծումներուն մէջ չեն հասնիր ռուս դասական գրողներու գործերուն:

Երբ կը նօթագրէի մեծ հեղինակին ըսածները, անձանօթ գտնելով տառերը ըսաւ. ի՞նչ լեզուով կը գրէք: Հայերէնով, պատասխանեցի: Կրնա՞ք թարգմանել ձեր գրածը ըսաւ Թրուայեա: Թարգմանեցի: Բայց որքան ճիշդ գրած էք, ըսաւ ան: Հայերէնով, ըսի գրողին, կարելի է մարդոց գաղտնագոյն զգացումներուն մասին արտայայտել ու վերլուծել գիտական նորագոյն բոլոր գիւտերը:

Ժպտեցաւ Թրուայեա եւ հարց տուաւ ինծի, թէ արդեօք կը ճանչնայի՞ր գրող Տանլուլովը:

Անշուշտ կը ճանչնամ, վարպետ, ըսի անոր: Կը ճանչնամ: Իր մասին յօդուած ալ գրած եմ: Դուք շատ կը նմանիք իրեն, բայց ունիք մէկ տարբերութիւն: Երկուքդ ալ հայ էք, երկուքդ ալ գրող էք, ան ռուսերէն կը գրէ ու կ'ապրի Մոսկուա, դուք ֆրանսերէն կը գրէք ու կ'ապրիք Փարիզ: Ահա ձեր նմանութիւններն ու տարբերութիւնները:

Լա՛ւ, լա՛ւ, ըսաւ Թրուայեա: Անցեալ տարի Տանկուլովը (Տանկուլեան) եկած էր Փարիզ ու ինծի բերած անգնահատելի մեծ նուէր մը:

- Եթէ գաղտնիք չէ, կրնա՞մ իմանալ:

Շար.ը էջ 19

SAHAG-MESROB ARMENIAN CHRISTIAN SCHOOL
2501 N. Maiden Lane, Altadena, CA 91001
OPEN REGISTRATION
FOR 2007-2008 SCHOOL YEAR
FROM NURSERY TO 12TH GRADE
Serving the community for 28 years
Accredited by Western Association of Schools & Colleges (WASC)
Accredited by Association of Christian Schools International (ACSI)
Curriculum:
Elementary School: We offer Armenian, Art, Bible, English, Math, Science, Social Studies, Computers, Music, Band, Physical Education, Drama, Recorders.
Middle & High School: We offer U.C. approved College preparatory courses, Armenian, Art, Bible, English, American Literature, English Literature, Algebra I, Algebra II, Pre-Calculus, Physical Science, Biology, Chemistry, Physics, Civics, Health, Computer, U.S. History, World History, Band, Drama, Honors and AP courses in several core subjects.
Pasadena City College Bridge program: We offer PCC college level courses on our campus in English, U.S. History, Political Science, etc.
Extra Curricular:
Elementary School: Extensive field trips, Speech Meets, Piano Festivals, Spelling Bee contests, Science Fairs, Concerts, Art Festivals, student programs for all festive and holiday occasions.
Middle & High School: Extensive field trips, 7 days to the East Coast, 15 days to Armenia, overnight camping and nature hikes, Speech Meets, Piano Festivals, Spelling Bee contests, Science Fairs, Concerts, Art Festivals, student programs for all festive and holiday occasions.
Faculty and Staff: Experienced teachers, mostly credentialed or masters degrees, ACSI certified, caring and professional.
Students: We are student centered. Each student is nourished mentally, physically, spiritually, emotionally, in a family like safe and caring environment.
Tuition: The most affordable of private schools.
For more information Call the school office at 626.798.5020

# ԵԿԵՂԵՑԻ

## «ՃԱՇԱԿԵՍՅՈՒՔ ԽԱՂԱԴՈՒԹԵԱՄԲ»

(Փոքրիկ Ըարցուսի մը Առիթով)

ՏԵՐ ԶԱԻՔՆ Ա. ՔԶՆՅ.  
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Կը հարցնեն յաճախ որ Սեղանի Օրհնութեան մեզի շատ ծանօթ «Ճաշակեացուք խաղաղութեամբ» համառօտ աղօթքին մէջ «կերակուր»ին ակնարկուած անցեալ ընդունելութիւն բայց «պատրաստեալ» է, թէ ոչ «պարզեալ»։ Այսինքն, Տէրը մեր առջեւ սեղանին վրայ դրուած ուտելիքը «պատրաստած» է թէ «պարզեալ», այսինքն նուիրած է։

Այնքան յաճախ արտասանուած աղօթքներ երբեմն տեղի տուած են անհարկի փոփոխութեանց, ու այս պարագային մանաւանդ, թէեւ նուագագոյն չափով իսկ անվնաս նկատուի տարբերութիւնը, այսուհանդերձ իր ուղիղ գործածութիւնը հարկ է գիտնալ։

Հայ Եկեղեցու աղօթքները ճշդուած են անպայման մեր ժամագիրքին մէջ կանոնական դարձած ժամապաշտութիւններով։ Ժամագիրքին մէջ կայ յատկօրէն «Օրհնութիւն սեղանոյ վասն մասնաւոր կերակրոց եւ ըմպելեաց» կարգը, ուր Տիրոջ «պարզեալ» հացն ու կերակուրը շեշտուած են կրկին եւ կրկին անգամներ, եւ ոչ մէկ պարագայի Տիրոջ վերագրուած է անոնց «պատրաստութիւնը»։ (Ժամագիրք, Երուսաղէմ, 1955, էջ 523-530)։

Թէեւ «Ճաշակեացուք խաղաղութեամբ» աղօթքը մեր գիտցած ձեւով չկայ այս կանոնին մէջ, կայ սակայն անոր բաղադրիչ մասերը որոնք յստակ կերպով գԱստուած կը ճանչնան որպէս Պարզեալը, ու գմարդիկ որպէս Պատրաստողներ։

Առաջին բառովն իսկ, երբ կը բանաք Սեղանի Օրհնութեան Կանոնը, «պատրաստեն զսեղանն հացիւ եւ կերակրօք» հրահանգը կուտայ, յոգնակի ձեւով, այսինքն «կը պատրաստեն» մարդիկ եւ տիկնայք, որ յայտնապէս ուղղուած է ճաշն ու սեղանը պատրաստողներուն, եւ ոչ թէ Աստուծոյ՝ բային եզակի գործածութեամբը։

Ուրեմն, եթէ պատրաստողները մարդիկ են, Տէրն ալ նոյն ինքը պարզեալողն է։ Աղօթքը ինքնին կը պարտադրէ ըսել «զկերակուրս որ ՊԱՐԳԵԻՆԱԼ է մեզ ի Տեառնէ», այն հասկացողութեամբ որ Կանոնի առաջին Սաղմոսէն կը յայտնուի որ «բոլորին աչքերը դէպի Քեզ կը նային եւ կը յուսան, որ Դուն կերակուր տաս անոնց»։ Տուողը Աստուած է, ինչպէս Սաղմոսը կ'ըսէ արդէն։

Սաղմոսին կը յաջորդէ քահանային մաղթանքը ուր կ'ըսուի, «ողորմած եւ գթած է Տէրը որ կերակուր կու տայ իր երկիւղած զաւակներուն»։ Իսկ անմիջապէս յաջորդող սարկաւազին քարոզը արդէն բացալատօրէն կ'ըսէ. «Կ'աղաչենք Ամենակալ Աստուծմէ որ մեզի կերակուր ՊԱՐԳԵԻՆԱԼ»։ Այս բոլորէն դարձեալ կը հետեւի որ պարզեալողը Աստուած ինքն է, իսկ պատրաստողը՝ մարդիկ։ Արդարեւ, մարդիկ ինչպէս պիտի պատրաստեն ուտելիքը, եթէ իրենց տրուած կամ պարզեալուած չըլլայ Տիրոջմէ։ Ինչպէ՞ս կը պատրաստեն բան մը որ չունիս։

Կանոնը կը շարունակէ ըսելով որ քահանան կ'օրհնէ հացը, կը բեկանէ, եւ ապա կը բաշխէ նախ

«ճաշը ՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐՈՒՆ, ու ասոնք ալ՝ միւս բոլորին»։ Պատրաստողները ուղղակիօրէն յիշուած են։ Իսկոյն քահանան կ'ըսէ «Ճաշակեացուք խաղաղութեամբ», այսինքն խաղաղ միտքով եւ սիրտով միասին ճաշենք, ու միայն այս երկու բառերով կը հրաւիրէ ներկաները ճաշելու, քանի որ մնացեալ մասը չկայ կանոնին մէջ, որ ըսել կուտայ մեզի որ մէկը ամբողջացուցած է զայն յետագային նկատի ունենալով Սեղանի Օրհնութեան Կանոնին բովանդակութիւնը։ Աղօթքին մէջ Աստուած, Արարչագործութեան ատեն իր ստեղծած առաջին «պտուղներէն» եւ բնութեամբ մեզի պարզեալած «բանջարեղէններէն» բաժին հանելով ամէն օր կը պագեւէ մեր հացն ու ուտելիքը, ու զանոնք մենք է որ կը պատրաստենք մեզի համար։

«Ճաշակեացուք» աղօթքը Աստուծոյ չէ ուղղուած, այլ մեզի, երբ կը հասկնանք զայն որպէս հրաւեր, այսինքն «եկէք ճաշակենք միասին»։ Եւ սակայն չենք մոռնար մենք զմեզ հրաւիրելէն առաջ ընդունիլ որ սեղանին վրայ գտնուած հացն ու ուտելիքը իրմէ միայն եկած ու հասած են մեզի, ինք «պարզեալ է» մեզի ամէն բանէ առաջ, իսկ «պատրաստողներն» ալ երկիւղածութեամբ եւ գոհունակութեամբ աշխատած են ու այժմ հրաւիրուած են ընթերցու սրտի բովանդակ խաղաղութեամբ։

Քահանան իր աղօթքին մէջ դարձեալ կը յիշեցնէ թէ «Տէրը

կերակրիչն» է, որուն ի պատասխան սարկաւազը կրկին իր քարոզը կը կարգայ, ըսելով. «Գոհացարուք ի վերայ լիութեանց պարզեալաց Տեառն Աստուծոյ մերոց», շեշտելով որ «ան կը կերակրէ զմեզ իր պարզեալներու լիութեամբը»։ Ճաշէն ետք արտասանուած աղօթքին մէջ, որ դրուած է Կանոնի վերջաւորութեան, Տէրունական Աղօթքէն ետք, քահանան կ'ըսէ. «Թող Աստուած օրհնէ ուտողները եւ երախտաւորները, որոնց վարձքը բարիով հատուցանէ ինք, Քրիստոս Աստուած մեր որ զմեզ կերակրեաց եւ լիացոյց»։

Ուրեմն, հիմնուելով ժամագիրքին Սեղանի Օրհնութեան յատուկ Կանոնի բովանդակութեան վրայ, պիտի աղօթենք այսպէս.

«Ճաշակեացուք խաղաղութեամբ զկերակուրս որ պարզեալ է մեզ ի Տեառնէ։ Օրհնեալ է Տէր ի պարզեալ իւր. Ամէն»։

Ըսողներ եղան թէ ինչո՞ւ համար «պարզեալ» բառը կրկին նոյն նախադասութեան մէջ երկու անգամ, նախ որպէս բայ եւ ապա որպէս գոյական։ Նոյն նախադասութիւնը չէ երբ ուղիղ կարգանք զայն։ Վերջակէտով մը կը գատորոշուին նախ «պարզեալողը», եւ ապա «պարզեալը»։ Եթէ նոյնիսկ կրկնութիւն նկատուի, Աստուծոյ պարզեալ որքան շատ տրուի՝ այնքան լաւ։ Թերեւս մէկուն միտքէն այս կէտը անցեր է եւ յիշեալ կրկնութեան խուսափելու համար Տիրոջ ընելիքը ինք որոշեր է։

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Սիւրբեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով։ G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104



# Wahib's

MIDDLE EAST RESTAURANT

الشرق مطعم

MEDITERRANEAN LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

## CATERING FOR ALL OCCASION



FAMILY ENTERTAINMENT BANQUET HALL EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT

INTERNATIONAL ~ ARABIC

CALL FOR RESERVATION



## BELLY~DANCING

MOUHAMAD SALEM & HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.  
TEL 626-281-1006 626-587-1048  
FAX 626-281-3641



### 20-ՆԵՐՈՒ ՆԱՐԱՏԱԿՈՒԹԵՆԷՆ ԻՆՇՍՈՒՆԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԵՏՔ

**Շարունակում է ընթացիկ 1-էն**

տանուրբունը:

Պատմութեան անիւր բտ չի դառնար 20-ներու հաւատքը, պայծառ-տեսութիւնը, պատգամները ամենօրեայ յիշեցումներու և քաջալիրութիւն ևն հայ ժողովուրդին, որ չի վիատի բնաւ: Մնայ իր սուրբ պահանջատիրութեան դիրքերուն վրայ, մինչև վերջնական յաղթանակ:

20-ներու նահատակութեան ինխուր արկուն արկուն արկուն արկուն արկուն, երբ գնահատութիւնը կը կատարենք 20-ներու ազգային, հայրենասիրական ու գաղափարական վարժագծերուն, ու անոնց, յանուն հայ ժողովուրդի ու անկախ հայրենիքի երազի նամբուն կոած տառապանքներուն ու մարտիրոսութեան՝ հիմա որ, իրականութիւնը դարձած է Անոնց դարաւոր երգը, տէր ենք Ազատ, Անկախ ու Գերիշխան Հայրենիքի՝ կ'ապրին խորը ափսոսանք, մեր հայրենիքէն ներս արձանագրուող իշխանութիւններու անփառունակ քերացումներուն ու բռնարարներուն, որոնք օրական կը պատուհասեն մեր բազմաչար ժողովուրդը: Մեր հայրենի ու սփիւռքահայ օրաքերքերու սիւնակները բեռնաւորում են հայրենական լուրերով, որոնք կը բռնաւորեն մէկ մի հայու միտքն ու հոգին: Ինչ պէտք մանրամասնելու այդ բոլորը, որոնց իրագրել է իր հայրենիքով մտահոգ մէկ մի հայորդի: Իշխանութեան հասնելու ձգտումը նպատակակէտ չէ: Ան միջոց է ամբողջական ծառայութեան ու նուիրումի: Իշխանութեան հասնելու նամբուն՝ բռնութիւնը, սպառնալիքը, ընտրակաշարները եւ ընտրագեղձումները՝ ժողովրդավարական սկզբունքներու ժխտումն են, ինչ որ կը ջլատէ ազգային արժանապատուութիւնը, յուսահատութեան կ'առաջնորդէ մարդ անհատը, կը պարպէ գայն պարկեշտ քաղաքային գագացումներէն:

Ահա թէ ինչո՞ւ, իրենց նահատակութեան ինխուր արկուն արկուն արկուն արկուն, ու միշտ՝ իրենց կեանքի օրինակով ու բուրբ անողորմ դահիճներուն առջեւ իրենց բարձրագոյն ու բոլոր ժամանակներու համար գերազանցապէս այժմէական, իրապաշտ ու խրախուսական պատգամներով, 20-ները միշտ ապրող, այլ՝ շօշափելի յուշարարներ պիտի մնան մէկ մի հայու, բոլոր ժամանակներու յատուկ, իրա՛ւ հայրենասիրութեան, իրա՛ւ ազգասիրութեան, իրա՛ւ նուիրումի ու իրա՛ւ գոհաբերութեան, որոնց այնքան կարիք ունին մեր նորօրեայ բոլոր, բոլոր իշխանաւորները, անխտիր՛ր:

Յաւիտեանապէս փա՛նօք ու պատիւ 20-ներուն եւ գանձով ծնած հայ ժողովուրդին:

### ԻՆՉՈՒ ԶՈՐՈՒԵՑԱՆ ՔՍԱՆՆԵՐԸ

**Շարունակում է ընթացիկ 6-էն**

«Դուք վաղը Արեւելքի հորիզոնի վրայ պիտի տեսնէք սոցիալ-խրատական Հայաստանը»:

Այսօր, 20ներու յաջորդները, անոնց գաղափարական հետեւորդ-

ները ամբողջ կը մնան կառչած անոնց ժառանգութեան եւ կը մնան հաւատարիմ անոնց տեսլականին, աշխարհի չորս ծագերուն: Մեզի կը մնայ խոնարհիլ իրենց լիշատակին առջեւ եւ ուխտել հետեւիլ իրենց գծած լուսեղէն ճամբէն:

### 1915 ՅՈՒՆԻՍ 15

**Շարունակում է ընթացիկ 7-էն**

րինելի գոհերը ուխտեցին ու ցմիշտ չգործեցին այդ ուխտը:

Ընդհանրապէս հայու թիւնը եւ մասնաւորաբար Հնչակեան կուսակցութիւնը 1915 Յունիս 15ին կորսնցուց իր ամենէն կարեւոր եւ անձնուէր գործիչներու մէկ հոյնը բայց այդ կորուստը մենք այն ատեն պիտի ամոսայիք երբ քսաններու ապրած ու պաշտած գաղափարը չունենար իր բազմաթիւ հետեւորդները ու այսպէս երկրիս երեսէն միանգամ ընդմիշտ անհետանար այն գաղափարը որուն գոհը դարձան քսանները: Բայց այժմ ինը տարիներ վերջ, երբ անոնք կը հանգչին Պոլսոյ մէկ աննշան հողաթմբին տակ, անոնց

գաղափարը, անոնց պատգամը կ'ապրի հայութեան մէջ ու մենք մեր ետին դարձուցած ակնարկով մը, հպարտութեամբ կը տեսնենք քսաններու կենդանի գաղափարը որ այսօր մարմին առած է յանձին Հայաստանի, որու համար գոհուեցան քսան անմահները:

1915 Յունիս 15ը անմոռանալի է մեր մօտ, հոն ուր հայութեան բեկորները կ'ապրին յարգանք եւ ակնածութիւնը ունին իրենց հոգւոյն մէջ հանդէպ Յունիս 15ի նահատակներուն: Այսօր քսաններու իններորդ տարեդարձի առթիւ աշխարհիս չորս ծագերուն ցրուած հագարաւորներու հետ պարտակապութիւն կը գգանք կրկնելու՝

Յարգանք Քսաններու անմահ լիշատակին:

### ՀՆՉԱԿԵԱՆ ԳՐԱԿԱՆ ԻՐԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔԸ

**Շարունակում է ընթացիկ 7-էն**

րանաւորուեցաւ Դաշակեան գրականութիւնը յանձնին՝ Սիւսանայի, Վարանդեանի եւ Ահարոնեանի:

Հնչակեան իրապաշտ դպրոցին կու գալ յարելու նաեւ Սուրէն Պարթեւեան, որ գրական սահմանէն անդին ցատկելով կը մասնակցի քաղաքական դաւերուն, նաեմացնելու իր գրչի փայլը, ուրիշ շատերուն հետ:

Սմբատ Բիւրատ՝ երկար առեն ուսուցչութիւնը Զնչակեան գործիչ մտաւորականը՝ կ'անցնի գրական ասպարէզ եւ նշանաւոր կը դառնայ իր գրով, որոնցմէ՝ «Երլ-տըզ Սասունը» եւ «Բանտէ բանտը» ժողովրդական լայն շրջանակին մէջ կը տարածեն հնչակեան ռազմական գործունէութիւնը:

Լեւոն Բաշալեան կոնակ դարձնելով փարիզեան գրականութեան՝ իր տիպաները կը վերցնէր հայ աշխատաւոր գանգուածէն:

Իր «Սիւզնի վարպետը» (1890) գաւառէն Պոլիս անցած թշուառ ընտանիքի մը պատմութիւնն է: Հացի կարօտ, տառապալից օրերէ ետք՝ յանկարծ կենսալից կը Ժպտի այդ ընտանիքին, երբ այրի Մարիամին աղջիկը՝ Թագուհի՛ սիւզնիի գործին վարպետը կը հռչակուի: Գնահատուած իր աշխատանքով՝ Թագուհին կ'ապահովէր իր ընտանիքին պէտքերը: Լուսարար մայրը՝ որ եղունգներու մաշումով կը դիտեցնէր իր չորս գաւակները, այժմ, շնորհիւ իր աղջկան աշխատանքին, կը շտկէր կորացած կոնակը:

Լ. Բաշալեան իրապաշտութիւնը կը նախընտրէր մտացածին դերասանութեանէն, որ յուժապէտս կը վատնէր գրողին միտը:

1892ին «Հայրենիք»ի մէջ լոյս տեսած «Ձրի» գրուած քով՝ Բաշալեան կը ներկայացնէր աղքատ դպրոցականի մը պատմութիւնը, որ «ձրիավար» է՝ իր նախատական յորջորջումէն ձերբազատուելու համար, կը հրաժարի ուսումնէն եւ կը դիմէ ճակտի քրտինքին, պատուաւոր աշխատանք մը ձեռք բերելով:

Լ. Բաշալեան շարքային Հնչակեան էր եւ բուռն եռանդով կը վարէր կազմակերպչական գործերը՝ մինչեւ 1896: Երկարատեւ հետապնդումներէն ազատելու համար կը փախչէր Պոլսէն եւ կ'ապաստանէր Լոնտոն, մասնակցելով «Մարտ» թերթին, իր իրապաշտ գրականութեամբ:

Այս շրջանի բեղուն գրչի տէր էր նաեւ Լեւոն Մկրտիչեան, որ կ'աշխատակցէր «Մարտ»ի եւ այլ թերթերու:

Հնչակեան այս հնոցին մէջ թրծուեցաւ նաեւ Տիգրան Կամսարական, որ տուաւ իրապաշտ գրուած քներ «Հայրենիք»ի մէջ: Վահան թէքէեան իր գրական

փորձերը կ'ընէ Չօպանեանի «Ծաղիկ»ին մէջ, 1895ին: Երուանդ Սրմաքէշխանյան՝ Թովմաս Թէրզեանի աշակերտելէ ետք՝ կ'անցնի «Հայրենիք»ի խմբագրութեան մէջ:

Միքայէլ Կիւրճեան սերտօրէն կը կապուի այդ օրուան երիտասարդներուն:

Շիրվանզադէն հասակ նետած էր Պաքուի հայ բանուորական կեանքի մէջ դեռ 1880 թուականէն սկսեալ: 1889ին երբ Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ կը պաշտօնավարէր, սերտ յարաբերութիւն կը մշակէր խանագատի եւ Ռուբէն Բէրբէրեանի հետ, կը մկրտուէր Հնչակեան: Ի բնէ գործօն երիտասարդ ըլլալուն՝ ան կը ստանձնէ կազմակերպչական փրօփականտի գործը եւ կը շրջի Ռուսաստանի հայաշատ քաղաքները՝ հիմնելով Հնչակեան մասնաճիւղերը:

Ռուբէն Բէրբէրեանի քարոզչութեան ազդեցութեան տակ՝ դասակարգային հակամարտ պայքարը կը ներմուծուի գրականութեան եւ թատերգութեան մէջ:

«Քառս»ը գրուած է երբ Շիրվանզադէն՝ Հնչակեան հրետանիին հետ բանտրկուած էր Մետեխի բերդին մէջ:

Ղազարոս Աղայեան անձնապէս գործօն դեր կը կատարէ Հնչակեան կուսակցութեան մէջ, որուն պատճառաւ կը հալածուի, բայց Շիրվանզադէի եւ Արփիարեանի նման՝ սկարու թեան կողմէր ցոյց չի տար օրուան իշխանաւորներուն հանդէպ՝ իր գործունէութեան ընթացքին:

Հնչակեան մեծ հրետանիներէն՝ Ատրպետ, չի բաւականանար միայն վկայեր արտագրել, այլ Պարսկաստանի եւ Կովկասի մէջ թեւերը ստիճած կը մտնէ ժողովրդական շարքերը, կը գինէ եւ Երկիր կը դրկէ ասպատակային խումբեր, մասնակցիլ տալու համար սուլթանի գամի դէմ մղած կռիւին:

Աւետիք Իսահակեան կը յօժարի դառնալ Կեղերոնի անդամ, աւելի մօտէն ծառայելու ժողովուրդին, բայց գրիչը աւելի հզօր կը կշռէ իր մօտ՝ քան բրիչը, ան կը մնայ ժողովրդական երգիչ եւ ոչ քաղաքական գործիչ: Պէտք չէ մոռնալ իր երիտասարդական աւիւնը եւ խանդը՝ որոնցմով ներշնչած էր իր օրուան հայ երիտասարդութիւնը, հակառակ Մետեխի բանտի խոնաւ մթնոլորտին եւ չարչարալից կեանքին:

Հայ անդրանիկ եւ հզօր յեղափոխութեան Մայր Կուսակցութիւնը այսօր՝ իր պանթէոնին մէջ կը գետեղէ իր գրչի արժանաւորները, որոնք իբր երախայրիք քիչ թէ շատ, աւելի տուած են յեղափոխական մեծ գործին, անոր սկզբնական շրջանին, եւ այս, որպէս յարգանք իրենց մատուցած ծառայութեանը:

**«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՀԵՌՈՒՍՏՏԵՍԻԼԻ 3ԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ**  
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ  
ԿԼԵՆՏԵՅԼ - ՊԸՐՊԵՆՔ - ԼԱ ՔՐԵՍԵՆԹ  
ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍՆ 10:00-11:00

**ՔԱՋ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
Ամէն Կիրակի երեկոյեան  
Ժամը 10:00-ից 12:00  
Կլէնտլի 26-րդ կայանից

**HARUT DER-TAVITIAN**  
License #0B28270  
1807 W. Glenoaks Blvd., Suite 202  
Glendale, CA 91201  
Tel.: 818/502-3233  
Fax: 818/502-3244  
Pgr.: 818/608-9898  
info@excellhye.com  
www.excellhye.com  
**EXCEL**  
HYE INSURANCE SERVICES  
AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի ֆուտբոլի առաջնութեան 8-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Արարատ - Գանձասար	1-0
Բանանց - Շիրակ	3-0
Միկա - Կիլիկիա	2-1
Փիւնիկ - Ուլիս	2-1

Խումբերու դասաւորումը

	Խաղ	Յաղթ.	Հաւս.	Պարտ.	Կոլ	Միակոր
1. Փիւնիկ	8	6	1	1	17-34	19
2. Բանանց	8	5	2	1	12-3	17
3. Միկա	8	5	1	2	18-9	16
4. Արարատ	8	5	1	2	11-2	16
5. Գանձասար	8	2	2	4	5-6	8
6. Շիրակ	8	2	2	4	5-9	8
7. Կիլիկիա	8	1	1	6	3-19	4
8. Ուլիս	8	1	0	7	3-22	3

ՇԱԽՄԱՏ

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆ ԿԸ ՅԱՂԱՎԱՐԷ ԱՃԻԱՐԿԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՀԱՒԱԿՆՈՐԴՆԵՐՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԸ

Էլիստայում ավարտուեց շախմատի աշխարհի ախոյեան կոչման հաւակնորդների մրցաշարի երկրորդ փուլը: Լեւոն Արոնեանը 3,5:2,5 հաշուով յաղթեց Ալեքսեյ Շիրովին, որը հանդէս է գալիս Սպանիայի դրօշի ներքո: Վերջին վեցերորդ պարտիան կայացաւ այսօր: Կողմերը ընդամենը 27 քայլ կատարեցին եւ հանդիպումը ավարտուեց խաղադ ելքով, որը ձեռնտու էր հայ գրոսմայստերին:



Առաջին փուլում Արոնեանը մեծ դժուարութեամբ յաղթել էր Մադնուս Կառլսենին: Նորվեգացու հետ մրցամարտում Լեւոնը երկու անգամ պարտուել էր սեւերով, ուստի Շիրովի դէմ պարտիաներում զգուշաւորութիւն ցուցաբերեց յատկապէս այն պարտիաներում, որտեղ հանդէս էր գալիս այս խաղաքարերով:

ՇՆՈՐԱԿՈՐԱՆՔ

Հրաչ եւ Նէնսի Մարգարեաններու ամուսնութեան ուրախ առթիւ Նիւ ձըրզիէն Տէր եւ Տիկ. Վարդան եւ Վարդուհի Լեւոնեաններ կը շնորհակարան ամուսնացեալ զոյգն ու անոնց ընտանեկան պարագաները: Առ այդ \$200 կը նուիրեն «Մասիս»ին:

ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Յուլիս 1	Հ.Ս.Ս. Կլէմտէյլ դաշտահանդէս
Յուլիս 14	«Մասիս» Շաբաթաթերթի ճաշկերոյթ
Սեպտեմբեր 1,2,3	Հ.Ս.Ս. Փասատինա եռօրեայ բանակում
Սեպտեմբեր 23	Հայաստանի Անկախութեան Օրուայ Փառատօն
Նոյեմբեր 4	ՍԳԳԿ-ի 120 Ամեակի Հանդիսութիւն

ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՅԱՏԿԱՑՈՒՄ

Վերջին տարիներուն Հաննոյ Հայրենակցական Միութեան Վարչութիւնը աւելիով աշխուժացուցած է իր ազգային եւ հայրենակցական գործունէութիւնը: Ինչպէս նախանցեալ տարիներուն, Վարչութիւնս 2007 տարեշրջանի համար եւս թոշակներ պիտի յատկացնէ Հաննրցի համալսարանական յառաջադէմ ուսանողներու: Հետաքրքրուողները կրնան դիմել հետեւեալ հասցէին, ստանալու համար իրենց դիմումնագիրները մինչեւ Յուլիս 31, 2007:

Compatriotic Union of Hadjin  
3834 Mayfair Dr.  
Pasadena, CA 91107-2216

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

ՄՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆուտբոլի առաջնութեան 35-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Ռէալ Մադրիտ - Ռասինկ	0-0
Ռէալ Պաթիս - Օսասունա	0-5
Մայորքա - Սելիլլա	0-0
Լեվանթ - Վալենսիա	4-2
Սարակոսա - Ռէալ Մատրիտ	2-2
Պարսելունա - Էսփանիոլ	2-2
Վիլառեալ - Աթլետ. Դիլայաս	3-1
Աթլետ. Մատրիտ - Սելթա Վիկո	2-3
Կեթաֆէ - Կիմնասթիթ	0-1
Տեփ. Քորունա - Յուլեկա	2-5



Առաջատար խումբերու դասաւորումը

Ռէալ Մատրիտ	37	22	7	8	63-39	73
Պարսելունա	37	21	10	6	73-32	73
Սելիլլա	37	21	8	8	64-34	71
Վալենսիա	37	20	5	12	54-39	65
Սարակոսա	37	16	11	10	54-42	59
Վիլառեալ	37	17	8	12	47-44	59
Աթլետ. Մատրիտ	37	16	9	12	44-38	57

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՎԱԶԳԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՀԵՏ

Ճարուակաւած էջ 5-էն

անել, եւ թող չխառնուի Հայաստանի իշխանութիւնը, ոմանց մէջ եղան տարածայնութիւններ այն կապակցութեամբ, թէ երբ Ղարաբաղը վտանգի տակ էր, Հայաստանից մարդիկ գնացին՝ պաշտպանելու, նոյնիսկ զոհուեցին, իսկ հիմա Ղարաբաղը յայտարար է չխառնուել... Ինչպէ՞ս էք մեկնաբանում այն տեսակետը, թէ Հայաստանը Ղարաբաղի համար անհրաժեշտ է միայն ծանրագոյն պահերին, երբ կեանքի եւ մահուան հաւասար հնարաւորութիւնների միջով երիտասարդները պատրաստ են անգամ զոհուել Ղարաբաղի համար, իսկ յետոյ՝ չխառնուել Ղարաբաղի խնդիրներին:

տարբեր բանակցութիւններ վարել: Փախստականների մասին (եւ Հայաստանցի, եւ ատրպէյճանցի) կարելի է բանակցութիւններ վարել: Մարդկային տեսակէտից պէտք է այդ հարցերը լուծել: Բայց հիմքում ընկած է այն, ինչից ամէն ինչ սկսուել է: Ղարաբաղի ժողովուրդը պատմականօրէն Հայաստանի մի մասը լինելով, ինքը իր հանրաքուէով եւ հետագայում պարտադրուած պատերազմում յաղթելով, ձեռք է բերել անկախութիւն: Եւ ոչ ոք չի կարող այդ անկախութիւնը գիշել: Դա պիտի աքսիոմ լինի ոչ միայն մեզ համար: Աշխարհի ցանկացած պետութեան համար դա պէտք է լինի աքսիոմ: Եթէ ժողովուրդը ինքնուրոյն բարձրացել է ոտքի, անկախութիւն է ձեռք բերել հանրաքուէով, պատերազմով ապացուցել, որ ինքը տէր է այդ անկախութեանը, ոչ մի պետութիւն իրաւունք չունի ասել՝ դու անկախութիւնը գիշիր ուրիշին:

-Ես կարծում եմ՝ այդ յայտարարութիւնն ուղղուած էր ոչ թէ Հայաստանի ժողովրդի դէմ, այլ՝ Հայաստանի իշխանութիւնների դէմ: Դա իմ տպաւորութիւնն է: Պէտք է խոստովանեմ, որ մենք, իսկապէս, զարմանալի ձեւով միասին ենք եղել ամբողջ շարժման ժամանակ, բայց Ղարաբաղցի-հայաստանցի ճաքեր են առաջացել: Դա ժողովրդին չի վերաբերուում: Ղարաբաղ որ գնում ես, այնտեղի ժողովրդի հետ որ շփուում ես, միշտ հիանում ես: Պայծառ, չտեսնուած ժողովուրդ է: Իսկական հայ ժողովուրդ է, նրանց համար Հայաստանը իսկապէս իրենց մայրն է: Բայց ղեկավարների մօտ՝ լինեն հայաստանցի, թէ ղարաբաղցի, ինչ-որ հակասութիւններ կան:

-15 տարի յետոյ Ղարաբաղի անկախութեան հանրաքուէի տարբերակը իբրեւ միակ հանգուցալուծում հռչակողներին ի՞նչ կ'ատէք:

-Դա այնքան բարդ հարց է: Ես դրա մէջ աւելի շատ ծուղակ եմ տեսնում, քան հարցի լուծում: Դեռ Ալիեւը ոչ մի անգամ չի ասել, որ որեւէ պայմանում՝ լինի հանրաքուէ, թէ ուրիշ բան, ինքը կը համաձայնի Ղարաբաղի անկախութեանը: Եթէ այդպիսի յայտարարութիւն չի արել, հանրաքուէի մասին ինչո՞ւ ենք խօսում: Եթէ ինչ-որ մի բան տալիս ես, ուրեմն մօտեցնում ես պատերազմը: Որովհետեւ ինչքան բան ես տալիս, այնքան աւելի ստրատեգիական տեսակէտից հակառակորդիդ ուժեղացնում ես: 15 տարի յետոյ կամ էլ կը սատկի, կամ՝ էշատէրը:


-Դուք ՀՀ նախագահի ընտրութիւններում առաջադրելու էք Ձեր թեկնածութիւնը, եւ այս իմաստով կարելի է նաեւ իմանալ Ձեր տեսակետը. հայկական կողմը ո՞ր զիջումներին չպիտէք է գնայ:

-Ղարաբաղի անկախութիւնը չպիտի գիշենք: Ղարաբաղի հետ Հայաստանի կապը չպէտք է գիշել: Տարածքների մասին կարելի է

Զբուցեց՝ ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Ձեր ճանուցումները Վատահեղէք  
«Մասիս» Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680  
F: (626) 797-6863  
Email: massis2@earthlink.net

### ՄԱՆԱԶԴ



**ՎԱՐԴԻՎԱՌ՝ ՏԵՐՏԵՐԵԱՆ**

Սրտի դառն կակիծով կը գոռթենք մեր սիրեցեալ հօր եւ մեծ հօր եւ հարազատին՝ ՎԱՐԴԻՎԱՌ ՏԵՐՏԵՐԵԱՆին մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 8 Յունիս, 2007ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 12 Յունիս, 2007, կէսօրէ ետք ժամը 2:30ին, Forest Lawn Hollywood Hills գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝
- Դուստրերը՝
- Աստղիկ Տէրտէրեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Ռոպէրթ եւ Սոֆիա Ասատուրեան եւ զաւակունք
- Ջարուկ Տէրտէրեան
- Տէր եւ Տիկ. Էլըն եւ Մէրլին Ծիւթց
- Կարօ ձուլֆայեան
- Ալլի Տիկին Թրֆանտա Օհանեան եւ զաւակունք
- Տիար Յարութիւն ձուլտուրեան եւ զաւակունք
- Ալլի Տիկին Օմէն Տէրտէրեան
- Տէր եւ Տիկ. Կարպիս եւ Սալբի Տէրտէրեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Գալուստ եւ Լենա Տէրտէրեան եւ զաւակունք
- Տիկ. Անի Տէրտէրեան եւ դուստրը Քրիսթին
- Տէր եւ Տիկ. Սարգիս եւ ձինա Տէրտէրեան եւ զաւակունք
- Տիկ. Ալիս Տէրտէրեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Ներսէս եւ Գարօ Պէզճեան
- Տէր եւ Տիկ. Մայք եւ Նայիրի Գազանճեան
- Տէր եւ Տիկ. Անդրանիկ Աւշարեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Գրիգոր Աւշարեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Վահան եւ Անժէլ Գազէզեան
- Վարդան եւ Վարուժ Գազէզեան
- եւ համայն Տէրտէրեան, Ասատուրեան Օհանեան, Պէզճեան, Աճշարեան, Գազանճեան, Գազէզեան, Ծիւթց, ձուլֆայեան ընտանիքները, բարեկամներն ու հարազատները:

### ՅԱՒԱԿՅՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԻՎԱՌ ՏԵՐՏԵՐԵԱՆի մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնը կը յայտնէ ընտանեկան բոլոր պարագաներուն:

### ՅԱՒԱԿՅՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԻՎԱՌ ՏԵՐՏԵՐԵԱՆի մահուան տխուր առիթով հետեւեալ անձինք իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն եւ առ այդ փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կը կատարեն «Մասիս» շաբաթաթերթին:

Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Ալին Աճէմեան	\$100
Տէր եւ Տիկ. Վահան եւ Անժէլ Գազէզեան	\$100
Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Մարալ Թաւուզճեան	\$50

# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**  
 Enclosed a check for (one year) \* \$50,00 for USA  
 \* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
 \* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name:-----  
 Address:-----  
 City:----- State:----- Zip Code:-----  
 Country:-----  
 Tel:----- Fax:-----

## ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ ԵՆՈՒՐՈՒԱԾ ՓԱՌԱՏՈՆ

Շաբունակուած էջ 13-էն

Հագիւ լսելի ձայնով սկսան արտաճմլիկ խորհրդաւոր «Գիշերը».

«Գիշերը ամբողջ հիւանդ, խելագար, ես երազեցի արեւի մասին: Շուրջս ոչ մի ձայն ու շշուկ չկար»

որքան խորհրդաւոր պատկերալից է... չէ՞ պատահած, որ գիշերը արթննաս, շուրջդ մութ, լուսթիւն, զգացումներդ քեզ անդորր չեն ձգած, «Անքնութիւն»ը քեզ կը տառապեցնէ, հոգիդ կը խռովի, երեւակայութիւնդ քեզ կը տանի (1915-19) թուրքին բարբարոսութիւններուն, արշաւանքներուն:

«Դոփում են, դոփում են ձիերը,

Մթին մէջ դոփում դոփում են, խիում են պայտերը, Անծայր է աշխարհը՝ անցում է ու մահ...»

պատկերը կը շարունակէ «Ես վախենում եմ» (1928)

Այս մէկը Չարենցի ամենախորհոգեբանական ապրումներով քերթուածներէն է: Երգը կը սկսի թէնորի արտայայտիչ մենբերով, ուր մենբերգիչ Gabriel Reoyo-Pazos հրաշալի դրսեւորեց հոգեվիճակը, որուն յաջորդող նմանեցուած անցումները յայտնաբերեցին հերոսի անօգնական վախի, հոգեկան խռովքի ապրումները:

Երկրորդ մասի կանացի դիմանկարները սիրող զգացումներ էին, դրսեւորելով կանացի քնքնշութիւնն ու եթերայնութիւնը հակասելով Ա. մասի մռայլ կերպարներուն:

Երրորդ մասի աշնան «Քամին» ամենահետաքրքրական փոթորկալից անհանգիստ հովեվիճակ էր կարծես: Եւ վերջապէս Չորրորդ մասի «Անվերնագիր» հատուածը (1936), գերզգայուն պատկեր է: Չարենց գուշակած էր իր մտաւրուտ մահուան արձագանքը ժողովուրդին մէջ:

Մեներգիչին առաջին սարսուռացի տողերու մենբերը՝

«Իմ մահուան օրը կ'իջնի լուսթիւն,

Ծանր կը նստի քաղաքի վրայ...»:

Պատեց մեզ տխուր տրամադրութիւններով, ողբերգական զգացումներով, երաժշտութիւնը չափազանց գուսպ եւ տրամադիր բարձրակէտի հասած էր կարծես: Պրկուած խորհրդածութիւններու մէջ մտանք: Դարձեալ լուսթիւնը յաղթած էր...:

Երկու հանձարներ իրար լաւ գոտած են: Չարենցի հոսքերով գրուած երաժշտութիւնը համաշունչ է ստեղծագործութեան իմաստին: Անոր անհանդարտութիւնն ու եռանդը վարակած է երաժիշտին: Չէ որ հանձարներ դիւրին չեն հասկցուիր...:

Վաչէ Պարսումեան այդքան բարդ գործը, հասկացողութեամբ ղեկավարեց, դրսեւորելով հակասութիւններն ու նրբութիւնները: Մանսուրեան երջանիկ էր...: Համբերին աւարտին երբ շնորհաւորեցի օտար մենբերգիչին հոյակապ ներկայացմանը, պատասխանեց: «Ես շնորհակալ եմ այսպիսի առիթ մ'ունենալուս, հպարտ եմ մասնակցութեանս, հրաշալի գործ է»: Մտածեցի, օտարը գնահատելը գիտէ ինչո՞ւ մենք ժամանակի հետ չենք:

### ՀԱՆՐԻ ԹՐՈՒԱՅԵԱՅԻ ՄԱՐԸ

Շաբունակուած էջ 15-էն

- Օ, ոչ երբեք, գաղտնիք չէ: Այդ ըսելով Թրուայեան վերցուց փայտէ աստիճան մը, մտաւ քովընտի սենեակ մը ու բարձրանալով ամենէն վերի դարակներէն ի վեր, վար բերաւ ոչ ծաւալուն գիրք մը ու երկարեց ինծի:

Հին ռուսերէնով գրուած էր ու կը խօսէր Թորոսեան-Թարասով գերդաստանին մասին: Առաջին երկու էջերը կարդալով հասկացայ այդքանը ու բացազանչեցի, - Օ, ինչ լաւ նուէր է իրապէս, հոս ձեր գերդաստանին հայ ըլլալուն մասին այնքան սիրուն հաստատումներ կան, կրնա՞մ այս գիրքին կրկնօրինակը ունենալ...:

Խօսակցութիւնը այլ ընթացք ստացաւ: Ըսի վարպետ գրողին, որ իմ ընկերներէս Տոսթոեւսկիագէտ Կարպիս Սուրէնեանը գտնելով Թոլսթոյի եւ Տոսթոեւսկիի տունթանգարաններուն մէջ շատ ներդրած է, որ ձեր մեծածաւալ եւ վարպետ մասնագէտի գրիչով գրուած ուսումնասիրութիւնները այլոց գործերու շարքին տեղ չեն գտած այդտեղ: Երանի տայիք ձեր այդ գործերը եւ ես տանէի յանձնելու Մոսկուայի համապատասխան տունթանգարաններուն:

Բայց այդ գիրքերը խիստ ծանր են, յայտնեց վարպետը:

Թող ծանր ըլլան ըսի, կը տանիմ: Մակագրեց: Տարի:

Միաժամանակ մեծ գրագէտը իմ անունիս մակագրեց եւահատոր «Les Eghletiere» վէպը:

Ինչպէ՞ս անցաւ ժամանակը, չհասկցայ: Երկուք ու կէս ժամ

գրոյցի նստած էի մեր ժամանկներու մեծագոյն գրողներէն, Ֆրանսայի մէջ ամենէն շատ կարդացուած հայածնունդ գրողին հետ եւ իբր թէ իր հայ ծագումին մասին որեւէ ակնարկութիւն չէի ըրած...:

Մեկնելէս առաջ թողթի մը վրայ մակագրեց.

Pour les jeunes ecrivains armeniens autour du journal KAROUN en leur souhaitant bonne chance.

Amicalement  
Henri Troya  
Paris, la 30 Janvier 1968

«Գարուն» ամսագրի շուրջ բոլորուած հայ գրողներուն մաղթելով իրենց բարի յաջողութիւն: Բարեկամաբար՝ Հանրի Թրուայեան Փարիզ, 30 Յունուար 1968:

Շրջան մը ետք Հանրի Թրուայեանի «Սեւ Ձիւն»ը թարգմանաբար լոյս տեսաւ Երեւանի «Գարուն» ամսագրին մէջ:

Ռուսերը իր որոշ գործերը մեզմէ առաջ թարգմանեցին:

Այսօր երբ իր 96 տարիքին մէջ կը կորսնցնենք մեծ գրողը՝ Հանրի Թրուայեան, ու իր ողջութեան ճանչցած ենք անոր արժէքը, պարտինք պահել հայ ժողովուրդի մէկ կայծակնային գրական յայտնումը, որ Ֆրանսայի առաջին ակադեմիկանը դարձաւ ու իր գործերով պէտք է դառնայ հայութեան պարծանքը, որ ծնաւ որպէս Թորոսեան, բառի ռուս հնչողութեան պատճառ դարձաւ Թարասով եւ մահացաւ որպէս Թրուայեան:

Հանրի Թրուայեան ֆրանսացի ու աշխարհին պատկանելով հանդերձ, հայութեան եւս կը պատկանի:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ,  
Լուսաշող Ապագայ:



Proud Past,  
Exciting Future.

**AGBU SOCIETY DINNER - OCTOBER 13, 2007**  
HUNTINGTON RITZ CARLTON HOTEL - PLEASE MARK YOUR CALENDARS

AGBU Pasadena Chapter Cultural Committee

Presents

*Art Classes*

Bring out the inner artist in your child.

Raffi "Bo" Boyadjian, Instructor

Ages 6 and Up

LESSONS OFFERED EVERY FRIDAY NIGHT

Session One: 6:00 - 7:00pm

Session Two: 7:00 - 8:00pm

The Art Room - AGBU Pasadena Center

2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104

For more information, please call (626) 794-7942

AGBU Pasadena Chapter

**SUMMER BASKETBALL CLINIC**

- Learn the game of basketball
- Improve your technique
- Make friends & have fun

TWO SESSIONS:

Session One: July 23 - July 27

Session Two: July 30 - Aug 3

NOON - 1:30 PM 8-10 yr. old Boys & Girls

2:00 - 3:30 PM 11-12 yr. old Boys & Girls

4:00 - 6:00 PM 13-14 yr. old Boys & Girls

ONLY 100 PER SESSION

Basketball T-Shirt Included

AGBU Pasadena Center

2495 E. Mountain St., Pasadena, CA 91104

SIGN UP NOW

Mon-Thurs 6-8 at the AGBU Center

For more information,  
contact Mr. Hratch Mankerian at 626-705-2675



**AGBU / AYA SCOUTS**  
Glendale / Pasadena Chapter



**SCOUTS SUMMER CAMP 2007**

Lake Isabella / Kern County

August 4 - 12, 2007

Cubs, Webelos, Juniors & Brownies Ages 7 - 11

Boy Scouts & Girl Scouts Ages 12 - 17

*Join us now and attend  
summer camp with the troop!*

"Havak" every Saturday 3:00 - 5:00 pm

AGBU Pasadena Center

2495 E. Mountain St., Pasadena, CA 91104

For more information, please call (626) 794-7942

AGBU GLENDALE / PASADENA CHAPTER  
**YOGA YOGA YOGA**  
COME JOIN US IN A FUN CLASS GUARANTEED  
TO CHALLENGE YOUR MIND AND BODY!

Mariette is a certified hatha flow yoga instructor and a registered nurse who teaches yoga in the community and to healthcare professionals.

Yoga is a holistic practice which utilizes your body's own energy powerhouse to optimize wellness in the body and mind.

Yoga is neither a religion nor simply a "workout".

LIMITED SPACES

For reservation or information, call A.G.B.U. office (626) 794-7942



THE QUALITY AND SAFE ALTERNATIVE FOR YOUR CHILD'S HIGH SCHOOL EDUCATION

2007-2008 ACADEMIC YEAR  
GRADES 9 - 12

For registration information, a campus tour and meeting with the principal, please call (626) 794-0363



AGBU SPONSOR



6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

